



Rédaction et Administration :
7, Rue Papère — MARSEILLE

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԺԳ Տարի - ԾԳՈՍՏՈՍ 1937



13^{me} Année - Août 1937

Խմբագրական
Մեր ժողովուրդը

Յ. Ն. Ղ.

Հոգ. կեանք

Քրիստոնեաներուն առեւտրական գործերը
Ձեռք մի զարներ

Վեր. Ա. Զ. Եղոյիան
Սամուէլ Պ.

Կենաց ածուներէն

Մուհամեդական ուսուցիչ մը Աւետարանէն յաղթուած

Հայացուց Ս. Պ.

Սերտոյողութիւն

Յիսուս Քրիստոս եւ ուխտերը

Երջանիկ յոյսը

Թագաւորին թագադրութիւնը

Վեր. Պ. Ս. Ակիւլեան

Պատմական

Մեծ դէմքեր ու դէպքեր...

Գ. Գ. Խայկեան

Ընտանեկան

Քրիստոնեային վկայութիւնը եկեղեցիին մէջ

Պատանեաց

Մօր մը կտակը

Յ. Ք.

Ձանազան լուրեր

Տէրն է ներկայ մեր մէջ

ԲԱՆԲԵՐ հոգևոր ամասներէր Թէն ֆրանսահայ Աւետարանա-
կան եկեղեցիներու պաշտօնականներն է, այսու ամենաշին-
նպատակ ունի ծառայելու ամենուն, որոնք ճշմարտութիւնը
կը փնտռեն եւ ծարար կըզգան Աստուծոյ խօսքին անխաղախ
վկայութեան: Քանի որ Քրիստոս չեկաւ միայն կարգ մը
անհատներու համար, այլ ամենուն, բոլորի ճշմարիտ «Բանին»
ներկայացուցիչն ալ չճանչնար ո եւ է յարմուածութիւն մը,
հապա մէկ է անոնց հետ, որոնք Քրիստոսի մէջ իրեն կը
միանան: ԲԱՆԲԵՐ կ'ուզէ ծառայել անոնց:

ԲԱՆԲԵՐ հոգևոր ամասներէր երկու լեզուներով կը հրատարակուի Հայերէն եւ Թուրքերէն: Երկուքն ալ
կը տպուին Մարտէլի մէջ: Հայերէնը ունի 16 էջ (կազմէն դուրս), որուն խմբագրական մարմինն է,
Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ, Բրօֆ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ, Պատք. Ս. ՊԱԳԳԱԼԵԱՆ, Վ. ՍԱՀԱԿԵԱՆ
Թուրքերէնը ունի 8 էջ ո'չ Թէ հայերէնին Թարգմանութիւնը ալ տարբեր բովանդակութեամբ: Այս պարագան
գիրութիւն կուտայ որ Թուրքերէն գիտցող մը անկէ ալ կրնայ օգտուիլ: Թուրքերէն մասի պատասխա-
նատու խմբագիրն է՝

ԺՕԶԷՑ Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ

18, Rue du Docteur Rebatel — LYON (France)

որո. լրկուելու են նաեւ բոլոր Թուրքերէն յօդուածները:

ԲԱՆԲԵՐԻ համար յօդուած կրնան գրել անոնք միայն, որոնք
գիտեն վերստին ծնունդն ու հոգևոր կեանքը եւ անոր մէջ
ապրելու ամենաքեալ ուրախութիւնը կը վայելն Քրիստոսով:

|||||

ԲԱՆԲԵՐԻ բաժանորդագրութիւնը տարեկան է կանխիկ

— ԲԱԺՆԳԻՆՆ Է —

ՀԱՅԵՐԷՆԸ Ֆրանսա 20 Սուրիա 15 Ֆրանք
Արտասահման Տոլար 1. 25

ԹՈՒՐԿԵՐԷՆԸ Ֆրանսա 10 Սուրիա 7 Ֆրանք
Արտասահման 60 սէնթ

ՀԱՅԵՐԷՆ եւ **ԹՈՒՐԿԵՐԷՆ** միասին Ֆրանսա 25
Սուրիա 20 Ֆրանք եւ Արտասահման Տոլ. 1. 75
(Դիւրութեան համար travelers check, թղթադրամ
եւ ամերիկեան նամակադրօշմ կրնայ ղրկուիլ):

Թղթակցութիւններ եւ յօդուածներ ղրկուելու են
Պատ. ՎԱՀԱՆ ՍԱՀԱԿԵԱՆԻ խի գրամական առա-
քումներ Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆԻ անունով, եր-
կուքն ալ հետեւեալ հասցէով.—

Réd. «PANPÈRE» c/o Rev. H. N. GHAZAROSSIAN

7, Rue Papère

MARSEILLE (France)

Մ'անստացով դրամական առաքումի առթիւ հաճեցէք մանտային վրայ չմոռնուլ գրելու
H. N. Ghazarossian, (Rédacteur) C. C. No. 182.53 Marseille

Որդին Աստուած մեզ կը սիրէ, եւ խաչին վրայ մեզի համար չարչարուելով մեռաւ:

Սուրբ Հոգին Աստուած մեզ կը սիրէ, եւ երկինքէն երկիր իջաւ մեզ համոզելու մեղքի համար, մեզ ապաշխարութեան առաջնորդելու եւ մեզի նոր կեանք մը հաղորդելու:

Ընթերցող, այս հրաշալի սէրը մի արհամարհեր, քանզի, «ինչպէ՞ս պիտի ազատինք եթէ անհոգ ըլլանք այնպիսի մեծ փրկութենէ մը»: Եբր. Բ 3:

«Ինչպէս որ եմ, մեղքով լեցուած,

կեղծ, մեղաւոր ու կորսւած,

Աչքերս դէպի Փրկիչդ ուղղած

Գառն Աստուծոյ, Քեզի կուգամ»:

Սոյն Թերթիկէն ունենալ եւ ցրուել ուզողներ Թող քարեթափին դիմել Բանքեր հոգեւոր ամսամերթի խմբագրութեան եւ իրենց պիտի ղրկուի ուզուած քանակով:

Հասցէ. — Panpère, c/o H. N. Ghazarossian
7, Rue Papère, Marseille (France)

Թիւ 4

ՆԱԻԱՊԵՏԸ ԵՒ ՊԶՏԻԿ ԹԱՓԱՌԱՇՐՋԻԿԸ

Պայծառ առաւօտ մը՝ նաւ մը ծովեզերքէն ճամբայ կ'ելլէր: Սակայն հագիւ ժամ մը անցաւ, սաստիկ հով մը բարձրացաւ եւ կարճ ժամանակի մը մէջ կատաղի փոթորիկի փոխուեցաւ: Մինչ նաւուն վրայ ամեն ոք բնութեան կատաղած տարերքներուն դէմ կը մաքառէր՝ ղեկին գործիքներէն մին խորտակուելովը մեքենան փառուեցաւ, այնպէս որ նաւը իր ուղղութիւնը կորսնցուց և ալիքներուն ձեռքը խաղալիք դարձած դէպի ծովեզր ժայռերուն վրայ քշուեցաւ: Նաւուն մէջ կը գտնուէին 28 հոգի, որոնցմէ մին թափառաշրջիկ տղայ մը՝ զաղտագողի նաւ մտած եւ պահուած էր ամբարանոցը:

Նաւը ժայռերուն զարնուելէ առաջ ազատարար գօտիներ ցրուրուեցան նաւաստիներուն: Վերջին գօտին վերապահուած էր նաւապետին: Բոլոր նաւաստիները, մէկը միւսին ետեւէն փրփրադէզ ալիքներուն մէջ նետուեցան՝ այն յոյսով թէ մինչեւ եզերք կը քշուին, քանզի այս էր անոնց ազատուելուն միակ ազնկալութիւնը:

Նաւապետը՝ որ ծովային ազնիւ սովորութեան

համաձայն նաևուն վրայ մնաց ամենքէն վերջը՝
կը պատրաստուէր իր նաւաստիներուն օրինակին
հետեւել՝ երբ, առաջին անգամն ըլլալով նշմա-
րեց նաևուն վրայի խեղճ պզտիկ փախստական
ճամբորդը: Տղան վախէն իր թագստոցէն դուրս
ելլելու ստիպուած, հոն կեցած էր դեփ-դեղին
կտրած, թրջած եւ դողդալով: Շատ ուրիշներ
այս ինքնակոչ ճամբորդը թող պիտի տային որ
ինքնիր գլխուն ճարը նայէր ինչպէս որ կրնար:
Անոնք իրենց խիղճը պիտի հանդարտեցնէին
սա խորհրդով թէ արդէն այս անբաղձալի
տղան նաևուն վրայ գտնուելու բնաւ իրաւունք
չունէր: Ասոր հակառակը՝ ազնիւ նաւապետը՝
առանց գայն յանդիմանելու կամ մեղադրելու,
առաւ իրեն ազատարար գօտին, գայն տղուն
կապեց եւ հրաման ըրաւ անոր ինքզինքը ալիք-
ներուն մէջ նետել, անմիջապէս յետոյ նաւա-
պետը ինքն ալ նետուեցաւ՝ քայց աւա՛ղ, առանց
գօտիի: Նաւաբեկեալներուն համար կեանքի
պայքարը սկսաւ, կատաղի, յուսահատ պայքար
մը փոթորիկէն բարձրացուած ալիքներուն ան-
գաղութմ, յոյգքին մէջ: Երկար եւ անձկալից
շանքերէ յետոյ՝ տղան վերջապէս ծովեզերքը
նետուեցաւ, մինչդեռ վեհանձն եւ քաջասիրտ
նաւապետը ժայռերուն միջեւ կորսուեցաւ:

Զմայելի բան մը տեղի ունեցած էր: Այս
նաւապետը, իրականին մէջ՝ իր կեանքը տուած
էր պզտիկ թափառաշրջիկի մը տեղ, այն ալ
փախստական նաւ մտած մէկուն:

Խնչ գեղեցիկ պատկեր մը ունինք հոս, Քրիս-
տոսի՝ փախանորդական վեհապոյն վարդապե-
տութիւնը բացատրող:

Յիսուս Քրիստոս, Աստուծոյ որդին՝ Իր հօրը
աթոռը թողուց: Մարդ եղաւ, եւ մինչեւ մահ-
ուան հնազանդ եղաւ, ու այն ալ խաչին
մահուանը: Եւ ինչո՞ւ: Իր թշնամիները փրկելու:
Ո՞րուն համար: Պատասխանը հետեւեալն է:


«Մեր Տէրն անսահման Իւր սիրովն իջաւ վար
Իւր մահուամբ փրկելու քեզ եւ զիս»:

Նա մեր տեղը առաւ, այնպէս որ մենք, կոր-
սուածներս, մենք մեղաւորներս, մենք իրեն
թշնամիները իր արիւնովը ծախսւ առնուինք,
կամովին թափուած արեան, եւ իր փառքին
մասնակից ըլլանք: Մէկը կրնա՞յ ասկէ աւելի
մեծ սէր մը յայտնել:

Հայրն Աստուծոյ մեզ կը սիրէ, եւ իր Որդին
մեզի համար տուաւ:

Արեւիկի՛ր դուն
որ կը յնամաս, եւ
կանգնէ մեռեղնե-
րէն, ու Քրիստոս
քեզի լոյս պիտի
տայ:
Լեփես Լ 14

ԲԱՆԲԵՐ



Աւրեմն տ' ըսինանք, որ չըլլայ Թէ
Անոր Գանգիտոր մտնելու խոտմունքէն որ մեզի մ'նացեր է,
ձեզմէ մէկը գրկուած գտնուի: Երբ. Գ. 1

Քանզի ալ աս-
կէ քիչ մը ատենէն
Ան որ գալու է՝
պիտի գայ ու պի-
տի չուշանայ:

Երբ. Ժ. 37

ԺԳ. ՏԱՐԻ

ՕԳՈՍՏՈՍ 1937

ԹԻԻ 8



ՄԵՐ ԺՈՂՈՎՆԵՐԸ

Մէկտեղ ժողովուրդը չթողունք

Երբ. Ժ. 25

Նիւթը, զոր ուսումնասիրելու կը ձեռնարկենք, թերթիս մէջ երկու թիւերու մէջ, կարեւոր է եւ ալժմէական, ինչպէս էր Երբայեցւոց թղթւոյն գրուելու ժամանակը: Մէկտեղ ժողովուրդը եկեղեցիին սիրոյ վկայութիւնն է, աւելի եւս բնական անհրաժեշտ պարտականութիւնը: Մէկտեղ ժողովուրդը (assemblée) անտեսանելի եկեղեցիին արտաքին երեւոյթն է, տեսանելի լսութիւնը, յայտնութիւնը: Առանց ժողովներու գոյութեան ի՞նչպէս յայտնի պիտի ըլլայ եկեղեցիի մը գոյութիւնը: Այս պատճառաւ Երբայեցւոց թղթւոյն հեղինակը, որ բազում փաստերով նոյն ինքն Պողոս առաքեալն է, երբ կ'ազգարարէ հրէութեան զարձակ հաւատացեալներուն՝ Նոր Ուխտի փառաւորութեան համաձայն նաեւ նոր կոչումով հաւատարմութիւն ցոյց տալ Անոր, պիտի բռնելով հաւատքի (հմր. 22), յոյսի (հմր. 23) եւ սիրոյ (հմր. 24) դաւանութիւնը, նոյնքան արժէքաւոր կը գտնէ նաեւ շեշտել մէկտեղ ժողովուրդը եւ ցաւով ալ կ'արտայայտուի թէ ոմանք սովորութիւն ունին զայն թողելու: Բայց կը պատուիրէ որ եկեղեցիի անդամները մէկգմէկ յորդորեն այս կէտին մէջ ու այնչափ աւելի, որչափ այն օրուան մօտենալը կը տեսնեն:

Առաքեալը պատճառ ունէր ազգարարելու որ ժողովները չթողունք: Յայտնի է թէ Երբայեցի հաւատացեալներ զանազան ակնկալութիւններով տարուած՝ ձգեցին իրենց հին հաւատքը եւ մտան Նոր Ուխտին մէջ եւ հոն չգտնելով այդ ակնկալութիւնները, յուսահատ եղան: Կ'երեւի թէ անոնք կը խորհէին որ երբ Նոր Ուխտին մէջ մըտ-

նեն, ալլեւս չպիտի ունենային առաջուան դժուարութիւնները — փորձութիւն եւ չարաչար անկում, հապա անմիջական կերպով խաղաղ եւ հոգեւորապէս հանգիստ կեանք մը պիտի ապրէին: Քանզի Քրիստոս իրենց տեղը մեռած ըլլալով այլեւս իրենք փորձութեան չպիտի ենթարկուէին, Սատանան ալ իրենց չպիտի կրնար մօտենալ: Այս սխալ տրամաբանութիւնով քաղեցին ժամանակ մը, գոհ եւ ուրախ, բայց առաջին եռեփ շրջանէն անցնելէն յետոյ, գտան նոյն փորցիչը եւ այս անգամ աւելի սուր զէնքերով իրենց դիմացը, զիրենք փորձելու եւ խարբալելու: Այս անհաճոյ անակնկալին առջեւ, իրենց սխալ հիմերու վրայ շինած խորհուրդներու դրդեակը փլուզումի կ'ենթարկուէր եւ ինքզինքնին կը գտնէին խիստ դժուար իրականութեան մը առջեւ: Իրենք ձգած էին Մովսէսական հինգած կրօնքը, որ ալ զիրենք չէր կրնար գոհացընել, բայց չէին կրցած գտնել իրենց փնտրած իտեալը քրիստոնէութեան մէջ եւ յուսահատած ու անհաւատացած էին: Այս անգամ երկուքն ալ ձեռքէ ձգած էին, ո՛չ մէկէն համ կ'առնէին, ոչ ալ միւսէն եւ սովորութիւն ըրած էին մէկտեղ ժողովուրդը թողելու:

Թերեւս ընթերցողներէս ոմանց փորձառութիւնն ալ այսպէս եղած է: Անոնք ժողովներէ դադրեցան, որովհետեւ անոնք իրենց ակնկալածին պէս եղած չեն: Իրենք տաք չեն զգացած այդ միջավայրին մէջ, հոգեւոր գտած չեն, եղածներուն մէջ ալ տարրեր մտայնութիւն մը գտած են, տաքքեր բառերով, ոճերով աղօթող, զիրենք

չյաշգոզներ, բանի մը տեղ չգնողներ, ուրեմն պէտք էր իրենց հրաժարիլ այդ ժողովներէն եւ ժաֆավաճառութիւն չընել:

Սակայն առաքեալը երբայեցեւոց ուղղած իր թուղթին մէջ կը ներկայացնէ թէ Նոր Ուխտին մէջ գտնուելով հաւատացեալը ո՛չ թէ Սատանային կրակոտ նետերէն ազատուած կ'ըլլայ, հապա ուղղակի անոնց ենթակայ կ'ըլլայ, բայց Քրիստոսով կատարեալ ապահովութիւն ունի: Հաւատացեալ ըլլալ չնշանակեր հանգստաւէտ և ծոյլ կեանք մը ապրիլ, հապա պայքարի եւ յաղթութեան կեանքը Տէր Յիսուսի հետ: Ատոր համար պէտք է մեզի ալ աւելի ուշադրութիւն տալ մեր լսած բաներուն որ չըլլայ թէ երբեք պակսինք (զլ. Բ.): Մեր հաւատքը հաւատարմութեան մը վրայ, հապա յարուցեալ կենդանի Քրիստոսի անձին վրայ որ բարձր է Աստուծոյ սուրբ հրեշտակներէն, աւելի բարձր է Մովսէսէ եւ Ահարոնէ ինչպէս նաեւ Մելքիսեղէկէ: Անիկա այդ բարձրութեան մէջ ըլլալով հանդերձ փորձութեանց եւ չարչարանքներու բովաքէն անցաւ իբր մարդ եւ իբր մեր առաջնորդ եղբայրը, փորձը առած ըլլալով մեզի նման բայց առանց մեղքի, մեր տկարութիւններուն, փորձութեանց ու չարչարանքներուն մէջ մեզի ողորմած ու օգնական է, որպէս հաւատարիմ քահանայապետ մը Աստուծոյ կողմանէ (զլ. Բ. Գ.) որ զեռ կը շարունակէ այդ պաշտօնը երկիրքի մէջ:

Միտքերնիս բերենք Անոր փորձուելու տեղեկագիրը Աւետարաններուն մէջ, երբ նա փորձաւորներու առջեւէն գնաց, բայց նաեւ իր փառայեղ յաղթութիւնովը եղաւ մեր հաւատքի առաջնորդը: Այս երկու կէտերը իրարմէ անբաժանելի են Անոր աշխարհային կեանքին մէջ:

Ուրեմն պիտի բռնենք... ամուր բռնենք մեր դաւանութիւնը եւ ալ համարձակութիւնով մօտենանք շնորհաց աթոռին առջեւ, որպէսզի ողորմութիւն ընդունինք եւ շնորհք գտնենք պէտք եղած ատեն մեզի օգնելու:

Այս է ճշմարիտ հայեցակէտը եւ այս ըլլալու էր ետ գացող երբայեցի հաւատացեւոց տեսակէտը:

Այս անհրաժեշտ բացատրութենէն յետոյ անդրադառնանք նիւթին, գայն շահաւէտ կերպով ուսումնասիրելու:

Ժողովները թողուլ իրենց հակարժէք հետեւութիւններն ունին, զորոնք կրել աչքի առնելու ենք:

Ժողովները թողելով կորսնցուցած կ'ըլլանք

հաւատոյ ընտանիքը: Ընտանիքը ապահովութեան վայրն է: Հոն գաղափարներու շփում կայ, բայց ընտանիք է, ապահովութիւն է: Երբ դրանք մէջ թշնամիներուն հետ խօսելու ըլլան, պիտի չամըչնան (Սաղ. ՃԻԷ.):

Կորսնցուցած կ'ըլլանք նաեւ միաբանական հաւատոյ դաւանութիւնը, միաբանական աղօթքները, եղբայրական մտերմութիւնը (Սաղ. ՃԼԳ) եւ Քրիստոսի մէջ եղած մէկութիւնը (Յովհ. ԺԷ. 21) և եղբայրական յարաբերութիւնը (Եփ. Ե 19):

Կորսնցուցած կ'ըլլանք նաեւ լսելու պատեհութիւնը: Հսելը Աստուծոյ զաւակներուն համար ամենակարեւոր պէտքերէն մէկն է: Մարդ միշտ ենթակայ է իր անձին շուրջը միայն դիտելու և միշտ կարճատեսութեան վտանգին մէջ կը գտնուի: Հսելով հոգեւոր մը հեռաւտեա կ'ըլլայ, տարբեր տեսիլքներու կը գիտակցի եւ Աստուծոյ խօսքէն լուսաբանուելով Աստուծոյ զաւակաց տրուած պարգևներէն ալ կ'օգտուի:

Կորսնցուցած կ'ըլլանք հաւատոյ թարմութիւնը Քրիստոսի մէջ եղած կեանքի ուրախութիւնը: Ժողովներէ ետ կեցող անձեր, բացառութիւնը չեմ գիտեր, ընդհանրապէս հեղզ կեանքի մը մէջ ինկած են, քարացած իրենց զաղափարին եւ ունեցածին վրայ եւ եղած են եսասէր և կռապաշտ, անպիտան եւ անպտուղ հաւատացեալներ, որոնց գոյութիւնը ո՛չ իրենցիկներուն օգտակար եղած է, ո՛չ ալ Աստուծոյ թագաւորութեան: Հաւատացեալը ցօղով ամէն օր ցօղուելու է եւ ցօղուելու իր շրջանակին մէջ ալ թարմութիւն մը, ուրախութիւն մը սփռելու համար: Այս թարմութիւնը կ'ընդունինք ընդհանրապէս միաբանական ժողովներու միջոցաւ:

Կորսնցուցած կ'ըլլանք Երբ. ԺԱ.ի հաւատոյ յաղթական կեանքը: Հեղ մ'ալ կարգաւ Երբ. ԺԱ.ը: Կորսնցուցած կ'ըլլանք արթնութեամբ Անոր գալստեան սպասող հոգին: Պօղոս առաքեալի մտքին մէջ եղող այդ հոգին սիրոյ եւ ծառայութեան հոգին ալ կը պարփակէ: Քանզի Քրիստոսի գալստեան սպասողը անհոգ եւ հսամոլ չըլլար, կ'երթայ, լուր կուտայ, մեռելներուն բարի լուրը կ'աւետէ, քնացողը երբ կ'արթնցնէ, սիրով անոնց ծառայելով, ձեռնառն ըլլալով, վերցնելով զանոնք: Անիկա լուռ չկենար, քէն չպահեր, Քրիստոսի սէրը կ'ստիպէ զինքը: Առաքեալը կ'ըսէ, «Մէկգմէկ յորդորենք, ու այնչափ աւելի որչափ այն օրուան մօտենալը կը տեսնենք»:

Ուրեմն մէկտեղ ժողովուրդը չթողուինք:

(Շալբ.)

Յ. Ն. Ղ.



ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐՈՒՆ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ

(վեր. Ա. Զ. Եղոյեան)

Այս օրերս՝ թերթերու եւ րատիօի միջոցով շատ կը գրուի ու կը խօսուի Քրիստոսի երկրորդ գալստեան մ. որդարեական նիւթին շուրջ, բայց շատ քիչ կը գրուի ու կը քարոզուի գործնական կեանքի վերաբերեալ նիւթերու շուրջ:

Դուրսիններս կը նկատեն որ, Աստուծոյ գաւազները առեւտրական գործառնութիւնները նոյն աշխարհիկ սկզբունքով եւ կերպերով կը կատարեն ինչպէս աշխարհի մարդիկ կ'ընեն: Անոնք շատ քիչ քրիստոնեաներ կը գտնեն որ բոլորովին իրենցմէ տարբեր կերպով դրամ կը շահին ու կը ծախեն: Քրիստոնեաներուն մէջ՝ ազահուծութիւնը եւ անյագութիւնը տեղ գտած է, անոնք դրամը դրամի վրայ, խանութը խանութին վրայ եւ տունը տան վրայ դիզելու եւ աւելցնելու տենչով բռնուած են: Իսկ Տէրոջը գործին համար տալու մէջ ալ աշխարհիկներէն շատ տարբեր չեն: Երբ պէտք մը ծանուցուի, ընդհանրապէս կուտան, բայց ոչ պէտք եղածին չափ: Ինչպէս աշխարհիկ քրիստոնեաներուն, նմանապէս ալ ճշմարիտներուն մէջ տալը հետզհետէ կը պակսի:

Հագեւոր ժողովներու յաճախելու մէջ տակաւ առ տակաւ ետ կը մնան: Կիրակի օրուան հանգէպ ալ երթալով յարգանքը կը պակսի եւ այդ օրը զուարճութեան համար կը գործածուի: Բայց Տէրոջը գալուստը մօտեցած է ու Ան պիտի որոշէ եւ փառաւորէ դանոնք որ Աստուծոյ խօսքին համեմատ կեանքը կ'ապրին:

Հաւատացեալներուն համար վտանգները շատ են եւ ալ աւելի կը շատնան. յիշենք հետեւեալները. —

1. Ապրուստի վախը օրէ օր կը ճնշէ ու հոգերով կը լեցնէ: 2. Յաջողութեան վտանգը. ոմանց համար յաջողութիւնը վտանգ մը եղած է — խիղճերը թմրեցնելով եւ ուրիշները զրկելու մը դնելով: Շատ քրիստոնեաներ կան որ իրենց պէտք եղածն շատ ունին, բայց Տէրոջը գործին համար որչափ քիչ կուտան:

3. Բաղադրակրթութեան վտանգը — որ հա-

ւատացեալները կը մղէ աշխարհայիններու նըմանելու եւ բոլորովին անոնց պէս ուտելու, հագուելու, ծախսելու եւ շոգլելու. նոյնիսկ ոմանք թատրոն եւ անվայել շարժապատկեր երթալու չափ առաջ գացած են:

4. Զաւակներու կողմէ վտանգ — որոնք ներկայ դարուս սկեպտիկ եւ աշխարհիկ դպրոցները կը յաճախեն եւ ամէն բանի մէջ իրենց ընկերներուն յարմարելու համար կ'ստիպեն իրենց ծնողները որ իրենց աշխարհիկ եւ նորաձեւային փափաքներուն յապեցում տան:

Սբ. Գրոց մէջ 15 մը կանոններ կը գտնեմ որ հաւատացեալը պէտք է ըստ այնմ ուղղէ իր առեւտրական կենցաղավարութիւնը. անոնցմէ ոմանք յիշենք հետեւեալ կերպով:

1. Քրիստոնեան թէ իբր վաճառական կամ գործատէր, թէ գործաւոր, յիշելու է որ ինք Աստուծոյ մէկ արարածն է միայն: Անիկա Իր ամէն արարածը Իր փառքին համար ստեղծած է: Մեր առեւտուրը եւ ամէն գործերը միայն Անոր փառքին համար ընելու ենք: Մենք մեր անձին տէրը չենք: Ան մեզ կը նախախնամէ ու կը հոգայ. մեզ գոյութեան բերելէն ետքը մեզ երեսի վրայ չի ձգեր. վասնզի ինչպէս կրնանք ըլլալ մենք մեզմով. հապա կը սնուցանէ մեզ եւ բոլոր մեր պէտքերը կուտայ մեզի: Անովկը շարժինք ու կը կենանք. բոլոր մարդիկ այսպէս են, եւ մանաւանդ մենք ճշմարիտ հաւատացեալներըս մեր անձին տէրը չենք, վասնզի գնով ծախու առնուեցանք Անոր Որդւոյն Յիսուս Քրիստոսի արիւնովը: Կ'ըսուի թէ մարդ պէտք է իր եւ իր գաւազներուն ապրուստին համար աշխատի, բայց Աստուծոյ խօսքին համեմատ չէ ապրուստը մեր գործունէութեան միակ նպատակակէտը ընել: Ա. Կոր. Ը. 6, Կոր. Ա. 16, Հռ. ԺԱ. 36:

Այսպէս մենք Անորն ենք երբեակ կողմերով, — իբրեւ արարած, իբրեւ խնամուած եւ իբրեւ փրկուած:

2. Աստուած հաւատացեալը կանչեր է իրեն ծառայ ըլլալու: Ծառան բան մը չունենար, ամէն բան Անորն է. խանութը Անորն է եւ դուն միայն գերի ծառայի մը պէս ընելու ես առուտուրդ: Անգամ մը Աստուածաբաններ «Քրիստոնէական մը պատրաստելու ատեն չկրցան համաձայնի սա հարցման պատասխանին վրայ թէ «Ինչ է մարդուս գլխաւոր վախճանը»: Յանկարծ տղայ մը ներս մտաւ եւ անոր հարցուեցաւ նոյնը: Տղան պատասխանեց, «Մարդուն գլխաւոր վախճանն է զԱստուած փառաւորել եւ զինք վախել յաւիտեան»: Իբր բաւարար եւ գեղեցիկ

պատասխան ընդունուեցաւ. այս բանաձեւը:

3. Քրիստոնեան կանչուած է Աստուծոյ գործակից ըլլալու, ուստի ըսել է ծառայէ մը աւելի, վառնզի այսպէս թարգմանուած բառը նոր կտակարանին մէջ ճշգրիտ կը նշանակէ վերի: Ծառայ մ, տակաւին ունի անձնական ազատութիւն, բայց գերի մը շունի, անիկա կը ծառայէ միայն եւ միայն իր տէրովը կամքին համեմատ: Մեր Տէրը Յիսուս Քրիստոս այս իմաստով ծառայեց Հայր Աստուծոյ, Հօրը կամքը Իրենն էր, ուրիշ կերպ չէր կրնար կամենալ եւ գործել: Յովհ. Դ. 34, Ե. 30, Զ. 38:

Որչափ զարմանալի բան է որ մինչ մէկ կողմէ մենք ծառայ ենք Աստուծոյ, միւս կողմէ Ան կամեցեր է որ գործակից ըլլանք Իրեն: Թէեւ Իր գործութիւնը ամէն բանի բաւական է, բայց տակաւին մեր կարողութիւններուն կը կարօտի որ Իրեն գործակցութիւն ընենք, եւ Իր խօսքին մէջ յայտնուած կանոններուն համեմատ հաւատարիմ ընկերներ ըլլանք Իրեն. այս ինչ շնորհք: Ուստի քանի որ Աստուծոյ գործակից ընկեր ենք, պէտք է որ Անոր հաճութիւնը փնտռենք բան մը ընելէ առաջ, տեղ մը դրամ տալ եւ առնելէ առաջ:

4. Ամէն բան Քրիստոսի անունովը ըլլալու է: «Ամէն ինչ որ կ'ընէք, թէ խօսքով եւ թէ գործքով, բոլորը Տէր Յիսուսի անունովը ըրէք» կող. Դ. 17, Ա. Կոր. Ժ. 31: Ես կեանքի ուրիշ գործառնութիւններու մասին չէ որ կը խօսիմ հիմա, այլ միայն առուտուր ընելու մասին: Քրիստոնեան պէտք է որ աս սկզբունքը որդեգրէ եւ հարցնէ ինքն իրեն. «Ես այս գործը Քրիստոսի անունովը կրնամ ընել, Անոր անունովը կրնամ այս բանը գնել կամ ծախել. զոր օրինակ, զինի կամ օղի եւ այլ արբեցուցիչ ըմպելիներ, ծխախոտ, քթախոտ: Քրիստոս պիտի կամենա՞ր անարգ տուներու համար ատաղձ կամ կարասի դնել ու ծախել, ու ես կրնամ այդպէս ընել Անոր անունովը:

Երկու տարի առաջ, կիրակի օր մը Սթրագպուրկի մէջ (Ալգաս) կը քարոզէի. քաջողէն յետոյ եղբայր մը շատ ազգու կերպով վկայութեան եւ յորդորանքի խօսքեր խօսեցաւ: Հիւրընկալէս հասկցայ որ աս եղբայրը պատրաստ թափու երկաթեղէնի վաճառական մըն էր, եւ այդ օրերը քանի մը հազար ֆրանքի շահաբեր ապսպրանք մը մերժած էր իմանալով որ իր ծախելու երկաթեղէնները պիտի գործածուէին թատրոն մը շինելու համար. անշուշտ զայս չէր կրնար ընել Տէր Յիսուսի անունովը:

5. Ոեւէ գործ որ հաւատացեալը կ'ընէ, պէտք է այն տեսակէն ըլլայ որ կարենայ իրեն եւ իր գործին վրայ խնդրել Տէրովը օրհնութիւնը: Ինչպէս Սաղմոսերգուն կ'աղօթէր ըսելով, «Մեր Տէր Աստուծոյ վայելչութիւնը մեր վրայ ըլլայ եւ մեր ձեռքերուն գործը հաստատէ» Սաղ. Դ. 17: Մէկը որ ըմպելի, ծխախոտ եւայլն կը ծախէ, կրնայ առտուն այսպէս խնդրել որ Տէրը օրհնէ ըմպելիի եւ ծխախոտի իր գործը, կամ ոեւէ գործ որ պիտի ընէ, կամ տեղ մը դրամ պիտի տայ, կըրնայ շիտ սկ խղճմանքով Աստուծոյ օրհնութիւնը հայցել այդ արարքին վրայ: Հաւատացեալի մը արհեստը պէտք է ըլլայ այն տեսակէն որ իրեն հոգեւոր աճումը արգիլէ, կամ անանկ գործ մը գոր ընելու համար ստիպուի ճամարտութեան շաքարով ծածկուած բայց Աստուծոյ առջեւ լեղի եղող կերպեր գործածելու: Օձին ճամբաները «ծամածուռ» են:

«Ձեր այոն այո, եւ ոչը ոչ»: Պօղոս Տիմոթէոսին կ'ըսէ թէ զինուոր մը այս կեանքիս գործառնութիւններովը չզբաղիր, որպէսզի զօրավարին հաճոյ ըլլայ: «Զբաղիր» թարգմանուած յունարէն բառը տառապէս կը նշանակէ «թնճկոտիլ», «Պըլլշտկուիլ»: Քրիստոնեայ մը պէտք է գործերու մէջ այնպէս մտնէ, պըլլշտկուի, որ չկրնայ անոնց մէջէն ելլել: Անգամ մըն ալ Պետրոս առաքեալը կը գործածէ այս բառը, անոնց համար որոնք աշխարհի պղծութիւններէն (մենք ըսենք գործերէն) հրաժարելէ ետեւ, եթէ անոնցմէ բնական ըլլալով յաղթուին, անոնց վերջը առաջինէն գէշ կ'ըլլայ: Յիրաւի որչափ շատ քրիստոնեաներու այսպէս կը պատահի, երբ ազահելով շատ գործերու մէջ կը մտնեն եւ անոնցմէ կը բռնուին (հոս կ'ըլլար յարմարի կարգաւ Ա. Տիմ. Զ. 6-10 համարները): Վերոյիշեալ կանոնին ուշադիր չլուրձ յետոյ կը տեսնեն որ հոգեւորապէս որչափ զազրացած են: Առաջ իրենց գտնուած տեղը օրհնութիւն կ'ըլլային ուրիշներուն, բայց հիմա զըթութեան եւ ամօթի, մինչիսկ ծաղրանքի առարկայ եղած են:

6. Հանդարտութիւն պէտք է ըլլայ խօսելու եւ գործելու մէջ: Փոյթն ու շտապը եւ յուզումը շատ անգամ փնաս եւ գըշում յառաջ կը բերէ: Մեր գործերը այնպէս մը կարգադրելու ենք որ ամէն բանի մէջ հանդարտութիւնը պահելու կարող ըլլանք: Շատ եւ շուտ խօսիլ, շատ եւ շուտ գործել միշտ փնասակար է: 25° որ շատ խօսքերու մէջ յանցանքը պակաս չէ, եւ չէ° որ շատ պով եղած գործերուն մէջ Սատանան կը մտնէ: Կարգա Յակ. Ա. 19, Ա. Թես. Դ. 11, Բ. Թես. Գ. 12:

7. Գործը ըլլալու է պատուաւոր: Քրիստոնէին գործը, առուտուրը կամ արհեստը ըլլալու է պատիւ բերող, գործ մը որ պատիւ կը բերէ իրեն հաւատքին եւ իր անունին, մանաւանդ իր «քրիստոնեայ» անունին, պատիւ իր Փրկիչ Տէրոջը եւ Ասոր Աւետարանին գործին: Հաւատացեալները հոգ տանին բարի գործեր ընելու վրայ ըլլալ Տիտ. Գ. 8: «Մերինները թող սորվին բարի գործեր ընելու վրայ ըլլալ»: «Բարի» թարգմանուած յունարէն բառը կը նշանակէ բարի ամենաաղէկ նշանակութեամբ. ասիկա կը պարունակէ հետեւեալ բոլոր բառերուն իմաստները — հաճելի, գեղեցիկ, ընտիր, պատուական, օգտակար, յարմար, վայելուչ, գովելի, արժանաւոր եւ պատուաւոր: Ճշմարիտ քրիստոնէի մը առուտուրը առանկ գործ մը ըլլալու է: 9 եւ 10 համարներով առաքեալը կը խօսի բաներ որ մանաւանդ ներկայ ժամանակիս մէջ ճշմարտապէս քրիստոնեայ գործաւորներու համար շատ կարեւորութիւն ունի: Այս պատուէրներուն համեմատ քրիստոնեայ գործաւորներ պէտք չէ հակառակ խօսին, հապաբարի հաւատարմութիւն ցուցնեն իրենց գործերուն մէջ, որպէսզի մեր Փրկիչ Աստուծոյ վարդապետութիւնը ամէն բանի մէջ զարդարեն: Բ. Թես. Գ. 1:

8. Այնպէս գործ մը ունենալ եւ գործել որ ուրիշներուն ալ օգտակար ըլլայ եւ «ընկերին» ալ շահը կարենայ փնտռել: Աստուծոյ խօսքը կ'ըսէ թէ քրիստոնեան այնպէս մը գործելու է որ բանի մը կամ մէկու մը կարօտ չըլլայ. մուրացկանութիւնը անվայել է Աստուծոյ զաւակներուն, եւ «անկարգութեամբ վարուիլ» (գործով մը չըզբաղիլ) ալ դատապարտելի է Ա. Թես. Գ. 11: Պօղոս եւ իր ընկերները Սիղուանոս ու Տիմոթէոս մեզի օրինակ են: Բ. Թես. Գ. 6-12:

9. Աստուծոյ զաւակները գործեն կամ առուտուր ընեն որպէսզի տան, պտուղ ունենան: Շատ կարեւոր սկզբունք մըն է: Աստուած մեզի չտար որ մեզի պահենք, այլ որ տանք ամենուն, մանաւանդ հաւատքի ընտանիքներուն: Եթէ ականջնիս բանանք, կը լսենք եւ աչքերնիս բանանք, կը տեսնենք թէ որչա՛փ տեղեր կան տալու: Դարձեալ կ'ըսէ Պղոս, թէ «քրիստոնեայ մը» աղէկ գործի մը պարապելով իր ձեռքերովը աշխատի որ կարող ըլլայ տալ կարօտ եղողին: Եւ Տէրը կ'ըսէ «Երանելի է տալը քան թէ առնելը»:

Քրիստոնեաներուն գործելու նպատակներէն մէկն ալ պէտք է ըլլայ պտուղ տալը Աստուծոյ: Տիտ. Գ. 14 համարը կ'ըսէ, «Եւ մերիններն ալ թող սորվին բարի գործեր ընելու վրայ ըլլալ

հարկաւոր պարագաներու մէջ, որպէսզի անպտուղ չըլլան: Նաեւ կը գրէ Եփեսացիներուն որ ամէն մէկը «աղէկ գործի մը պարապելով» իր ձեռքերովը աշխատի, որպէսզի կարող ըլլայ տալ (յունարէնը հաղորդել) կարօտ եղողին Եփես. Գ. 28: «Անիկա հոգ տանի ասանկ գործերու վրայ ըլլալ որպէսզի անպտուղ չըլլայ»: Ասիկա բացասական կերպով քսուած է: Իսկ մեր Տէրը Ինք կ'ըսէ դրական կերպով, «Եւ ձեզ ընտրեցի ու դրի որպէսզի դուք երթաք եւ պտուղ բերէք ու ձեր պտուղը մընայ» Յովհ. ԺԵ. 16: Նոյնպէս Պօղոս կ'ըսէ թէ ինչու համար մենք փրկուեցանք «Որպէսզի Աստուծոյ պտուղ բերող ըլլանք» Հռովմ. Է. 4: Ի՞նչ է պտուղ: Նոր Կտակարանին մէջ կը գտնենք թէ «պտուղ» կը նշանակէ ամէն տեսակ բարի գործեր Կող. Ա. 10, Յակ. Գ. 7: Կարօտեալ քրիստոնեաներուն եւ Աւետարանի պաշտօնեաներուն համար նիւթական օգնութիւններ Հռովմ. ԺԵ. 28, Փիլ. Գ. 17: Արդարութեան գործեր Բ. Կոր. Թ. 10, Եփես. Ե. 9, Փիլ. Ա. 11, Եբր. ԺԲ. 11, Յակ. Գ. 13: Ապաշխարութեան արժանաւոր ցործեր (խոստովանութիւն եւ հատուցում) Մատթ. Գ. 8, Դուկ. Գ. 8, 10-14, Գործ. ԻԶ. 20: Հոգիին պտուղը որ ինք տեսակներով բաղադրեալ է Գաղ. Ե. 22, 23, աւելցուր արդարութիւն եւ ճշմարտութիւնն ալ Եփես. Ե. 9, գոհութիւն առ Աստուած Եբր. ԺԳ. 13: Բայց պտուղ կը նշանակէ մանաւանդ փրկուած հոգի մը Յովհ. Գ. 36, 12-24: ԺԵ. 1-8, Հռովմ. Ա. 13, Փիլ. Ա. 22 եւ 24, Կող. Ա. 6: Այս պտուղն է որ կը մընայ: Միւս բոլոր պտուղները ունենալու ենք, որոնց ամէնը դրամ տալով կ'ըլլայ: Աշխարհիկ իմաստունները դրամ ու հարստութիւն շահիլը կը համարին իմաստութիւն, բայց ըստ Աստուծոյ «Հոգիներ վաստկողը իմաստուն է» Առակ. ԺԱ. 30: Մեր Տէրը աշխարհիկ իմաստունի մը ըսաւ «Անմիտ» Դուկ. ԺԲ. 15-24: Քանի որ ամենակարեւոր պտուղը հոգիներ շահիլն է, այս նպատակին օժանդակելու է բոլոր գործերովը:

Սիրելիներ, երբեք խորհեցա՛ք որ քրիստոնէին ոեւէ զբաղումը «աւետարանչութիւն» է: Այնպէս գործել, գնել, շահիլ ու ծախսել որ հոգիներ շահուին: «Արդ, թէ՛ ուտէք, թէ՛ խմէք, եւ թէ ինչ գործ որ ընէք, ամէն բան Աստուծոյ փառքին համար ըրէք» Ա. Կոր. Ժ. 31: Եւ ինչո՞վ մենք աւելի կրնանք փառաւորել զԱստուած, քան հոգիները Քրիստոսի փրկութեան առաջնորդելով: Պօղոս առաքեալը մեզի օրինակ է, եւ ան կ'ըսէ, «Ես ալ ամէն կերպով ամենուն ծառայ կ'ըլլամ ու չեմ փնտռեր իմ անձիս օգուտը (եւ

այս ըսել է վրանագործութիւն չեմ ընեք, կամ
դրամ չեմ լուծեցներ իմ անձիս համար) հապա
շատերուն օգուտը որպէսզի վերկուլին. ինձի նը-
մանող եղէք, ինչպէս ես ալ Քրիստոսի»:

Տէր Յիսուս այսպէս օրհնէ մեզ եւ բոլոր հա-
ւատացեալները:

Քաղեց ՅԱՐՈՒԹԻՒՆ ԽԱՐԲՈՒԹԼԵԱՆ

Մայիս 9 Կիրակի, փետտինա

ՁԵՌՔ ՄԻ ՁԱՐՆԵՐ

Եւ Գանիէլ միտքը դրաւ որ Թագաւորին ազնիւ
կերակուրովը ու անոր խմած գինիովը չպղծուի:
Գան. Ա. 8

Հաճոյքները այս աշխարհին, հաճոյքները այս մարդերուն՝
Բաժակներ են վարդակարմիր, բաժակներ լի՝ եւ փրփրուն:
Բայց դուն գիտես որ այդ բոլոր խմիչքներուն տակը պառկող
Մըրուրները՝ Թոյն են հոգիս, Թոյններ լեղի եւ մահադող:

Ձեռք մի՛ զարներ այդ կախարդիչ սրբուակներուն պղծափրփուր.
Հոգի՛ս, անոնց ժահր-հաճոյքէն սիրտըդ պահէ ընդմիշտ Թափուր:
Բայց լուսազգեստ դեւ մի՛սկ եթէ տայ ըմպանակն իր արծաթէ,
Ան եւ կոտրէ՝ սրբազանքէ՛կ կուռ կըռանովըդ երկաթէ:

Ո՛չ, ո՛չ հոգիս, ես չեմ ուզեր անգիտանալ սրբափր անհուն
Քաղցն ու ծարաւը հարազատ հաճոյքի սուրբ եւ մընայուն.
Բայց ես կ'ուզեմ որ յազենաս ըմպանակէն այն երկնատուր՝
Որ լեցուած է անխառն սիրով եւ օրհնութեամբ մաքրամաքուր:

Քու երկնաւոր Հօրըդ ձեռքով քեզի տրուած ամէն գաւաթ,
Ի՞նչ փոյթ թէ նա ըլլայ պղղինձ, եւ կամ ոսկի եւ կամ արծաթ,
Հոգ չէ նոյնիսկ թէ նա լի է արտասուքով, թէ ժրպիտով,
Ա՛ն խընդութեամբ, ա՛ն եւ ըմպէ գաւակի մը պէս անհրոգով:

Աստուածատուր ամէն գաւաթ, լի՛ է, հոգիս, օրհնութիւնով...

ՍԱՄՈՒԷԼ Պ.



ՄՈՒՀԱՄԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑԻՉ ՄԸ

ԱԻԵՏԱՐԱՆԷՆ ՅԱՂԹՈՒԱԾ

Մովի-Մահպիւլ-Խան, ուսուցիչ էր Հնդկաս-
տանի մէջ Անգլիոյ պետական դպրոցին: Իր ման-
կութեան՝ ժամանակ մը Սիլքոթի միսիոնարա-
կան դպրոցը յաճախած էր: Ապա օր մը երբ «Ի՛նչ
է ճշմարտութիւնը» հարցը՝ իրեն համար ամենա-
հրատապ խնդիրը դարձաւ, սկսաւ կարդալ մու-
համետական ամէն գիրք որ կրցաւ ձեռք ձգել:
Բայց որքան կը կարդար, այնքան աւելի ներ-

քին մտաւորաբար ինքնին կ'աւելնային: Մինչև
որ օր մը, ալ յոգնած՝ լքեց այդ պարտումները:
Մանկութենէն ի վեր ուսուցած էին իրեն թէ՛
քրիստոնէութիւնը ստույգեան կրօնք մըն է: Սա-
կայն, իր անձնական խուզարկութիւնները զինք
այն համոզման հասցուցին թէ՛ մուհամետակա-
նութիւնն ալ ոեւէ վստահութեան արժանի չէ:
այս տրամադրութեամբ էր որ օր մը պետական
դպրոցը ուղղութեամբ եւ հարցուց թէ՛ արդեօք
կարդալիք ոեւէ հետաքրքրական գիրք չունէ՞ր
որ կրնար իրեն օգտակար ըլլալ: Պատասխան-
ութեամբ իրեն թէ հոս, մեկնող միսիոնարի մը
ձգած նոր Կտակարանէն գատ ուրիշ գիրք չկայ:

Ուրիշ գիրք չգտնելով, Մահպիւլ-Խան վեր-
ցուց նոր Կտակարանը, գնաց տուն եւ սկսաւ
կարդալ: Բայց հագիւ քանի մը գլուխ շրջած էր,

զիրքը մէկզի դրաւ տաղտկացած: Սակայն նորէն ձեռք առաւ, այս անգամ զայն լման ուսումնասիրելու հաստատաւորութեամբ: Մատթ. Ե. զլուխը զինքը դրաւ եւ: Լերան վրայի քարոզին երանութիւնները իրեն հիանալի թուեցան: Ու թէեւ ամբողջ Աւետարանը քրիստոնէից հնարամտութեան արդիւնք կը նկատէր դեռ, ասով հանդերձ այն աստիճան հմայուած էր աւետարանական պատմութենէն որ առանց լնդհատումի մինչեւ ծայրը կարդաց:

Մատթէոսի Ի՛ւ. զլուխը հասաւ: Մինչ չարչարանաց պատմութիւնը կը կարդար, յանկարծ փայլակի արագութեամբ այն տպաւորութիւնը ընդունեց թէ այս պատմութիւնը չկրնար սուտ կամ հնարուած բան մը ըլլալ: Եւ թէ ճիշդ այս ՅԻՍՈՒՍԸ ճշմարտապէս Աստուծոյ Որդին է: Ան այս համոզումին մէջ այն աստիճան յառաջացաւ որ առանց ոեւէ միսիոնարի հետ ոեւէ խօսք փոխանակելու, հաւատքով Քրիստոսը որպէս անձնական Փրկիչ ընդունեց: Եւ այս, Աւետարանի պարզ ընթերցանութեամբ միայն:

Այդ վայրկեանէն իսկ, վճռեց հիմնովին հրաժարիլ մուհամետականութենէն եւ գաղտնորէն Վապուիլ Քրիստոսի: Գաղտնորէն, որպէսզի իր հաւատքին հրապարակային դաւանութեամբը ոչ իր զիրքը վտանգուի, ոչ ալ ինքզինքը հալածանաց ենթարկէ: Բայց երբ դպրոցի մէջ աշակերտներով շրջապատուած էր, չկրցաւ իր ընդունած ուրախութիւնը անոնց հաղորդելու փափաքը դապել: Քիչ վերջ, բոլոր եռանդով սկսաւ իր աշակերտներուն առջեւ պարզաբանել այն բոլոր պատճառները՝ որոնք մուհամետականութեան կեղծ կրօնք մը ըլլալը կը հաստատեն, աւելցնելով թէ պէտք է քանդել այդ հաւատքը գէթ զարգացեալներու քով:

Պէտք չեղաւ երկար ժամանակի, որպէսզի ամէն մարդ զիտնար թէ Մահալիւպ-Նան ալ մուհամետական մը չէ, այլ դեռ թէեւ ոչ մկրտուած մը, սակայն Քրիստոսի կապուած հաւատացեալ մըն է: Ուխտեց նաեւ միշտ աւելի եռանդով ինքզինքը քրիստոնեայ դաւանիլ հրապարակաւ: Այսպէս օր մըն ալ Պիւտաօն գնաց, Ամերիկեան միսիոնարներու քով, հասկնալու համար թէ ի՞նչ պայմաններով կրնար Քրիստոսի եկեղեցիին մէջ ընդունուիլ: Միսիոնարները պատասխանեցին իրեն թէ՛ հարկաւոր չէ ոեւէ արտաքին գործ, այլ կարեւորը Ս. Հոգիով եղած սրտի նորոգութիւնն է եւ մկրտութիւնը անոր կնիքը: Ձգէ որ, Սուրբ Հոգւոյն գործը իր մէջ այնքան ակներեւ էր որ միսիոնարութիւնը բոլորովին տրամադիր զըտ-



Ս. ԳՐԱԿԱՆ

ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

Քաղեց՝ SCOFFIELD ԷՆ

Վ. ՍԱՀԱԿԵԱՆ

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ ԵՒ ՈՒԹՅԵՐԸ

○○○○○○○○

Ս. Գիրքը մեզի ութը ուխտեր կը ցուցնէ՝ զորոնք Աստուած մարդուն հետ ըրաւ: Այս բոլորին հանդէպ ալ Քրիստոս իր յարաբերութիւնը ունի, եւ բոլորն ալ Քրիստոսը կը ցուցնեն եւ Անոր մէջ կը կատարուին, «վանդի» ամէն բաները և՛.

նուեցաւ զայն մկրտելու: Եւ սակայն անոնք վախցան թէ այս վճռական քայլով մղած պիտի ըլլային կինը ձգելու իր ամուսինը եւ Մահալիւպ Նանի ընտանեկան բովանդակ երջանկութիւնը պիտի խանգարուէր: Ի՞նչ ընել հարկ էր ուրեմն: Մահալիւպ-Նան քաջութեամբ զինուեցաւ եւ ծանուց իր կնոջ թէ որոշած էր քրիստոնեայ ըլլալ (մկրտութիւնը որպէս հրապարակային դաւանութիւն նկատելով) աւելցնելով թէ ինք խորապէս համոզուած էր որ այս է Աստուծոյ ճամբան որ մարդը փրկութեան կ'առաջնորդէ: Կինը սա ըսքանչելի պատասխանը տուաւ, «Ես քու կինդ եմ, եւ քեզ երբեք պիտի չլքեմ, նոյնիսկ եթէ ամենայնեւոր անարգանքով ալ մերժուիս դուն ամենէն, տակաւին քեզի հետ պիտի ըլլամ»:

Փորձեցին կինը հրաժարեցնել այս որոշումէն: Խոստացան անոր ամուսնալուծման պաշտօնական թուղթ եւ շարունակական հոգածութիւն, բայց ան մերժեց այդ ամէնը եւ հաւատարիմ մնաց իր ամուսնոյն:

Շատ շանցած կինն ալ իր ամուսնոյն եւ զաւակներուն հետ միասին մկրտուեցան: Յետ այնու իրենց ազգականներէն շատեր ապաշխարութեան առաջնորդուեցան: Եւ որպէս հետեանք այս դէպքին, իրենց բարեկամներէն ու ծանօթներէն բազմաթիւ անձեր դարձան աւելի մատչելի ու բարեացակամ Քրիստոսի Աւետարանին հանդէպ: Մահալիւպ-Նան ինք եւ իր կինը դարձան շատ պատուական անդամներ իրենց համայնքին՝ եւ միսիոնարաց գործակիցներ:

Հայացուց Ս. Պ.

կէ ու վնուվ եւ վնոր համար են, իրեն փառք յաւիտեանս: Ամէն: (Հոով. ԺԱ. 36):

1. Եղեմական ուխտը.— Ծննդ. Ա. 26-29: Աստուծոյ ուխտերը մարդուն համար կեանքի եւ փրկութեան պայմանը կը դնեն: Եղեմական ուխտը մարդուն կեանքի պայմանադրութիւնն էր անոր անմեղութեան շրջանին: Եղեմի դրախտին մէջ մարդը եւ կինը պատասխանատու էին աւերկերը նոր տեսակի (մարդ) էակներով լեցնելը. երկիրը մարդկային օգտակարութեանց հպատակեցնել, գ. կենդանիներուն իշխել, դ. բուսեղէն եւ պտղեղէն ուտել, եւ պարտէզը գործել եւ պահել, զ. բարւոյ ու չարի գիտութեան ծառէն ուտելէ զգուշանալ, է. պատիժը մահ պիտի ըլլար:

Եղեմական ուխտին հանդէպ Քրիստոսի յարաբերութիւնը հետեւեալն է: Նա իբր «Երկրորդ մարդը», «վերջին Ադամը» (Ա. Կոր. ԺԵ. 45-47) կը վերապրաւ ամէն բանի վրայ իշխանական աշխարհիւրքը որ առաջին Ադամ կորսնցուց (Կող. Բ. 10, Եբր. Բ. 7, 8):

2. Ադամական ուխտը.— Ծննդ. Գ. 14-19: Ադամական ուխտը ինկած մարդուն կեանքը կը պայմանադրէ: Այս պայմանները պիտի մնան մինչեւ հազարամեան, Աստուծոյ թաղաւորութեան ոսկեդարը՝ երբ «ստեղծութեան իրենք ալ ապակաշուկեան ծառայութեանէն ազատուելով, Աստուծոյ որդիներուն փառաւոր ազատութեանը հասնին» (Հոով. Ը. 21): Այս ուխտին մէջ խնդրոյ առարկայ են ա. Օձը, Սատանային գործիքը, որ կ'անիծուի եւ կը դառնայ բնութեան մէջ խիստ աչքառու օրինակը մեղքի արդիւնքին: Արարածներուն ամենէն գեղեցիկն ու խորագէտը կը դառնայ նողկալի սողուն մը: Քրիստոսի քաւութեան ամենախորունկ խորհուրդը պահուած է ասոր մէջ: Քրիստոս որ «մեզի համար մեղք եղաւ» մեր դատապարտութիւնը կրելով կը ներկայացուի օձին օրինակով խաչին վրայ (Թուոց ԻԱ. 5-9, Յովհ. Գ. 14, 5, Բ. Կոր. Ե. 21):

բ. Փրկչի մը առաջին խոստումը: Հոս կ'սկսի սուրբ սերունդը, Աբէլ, Սէթ, Նոյ, Սեմ, Աբրահամ, Իսահակ, Յակոբ, Յուդա, Դաւիթ, Էմմանուէլ-Քրիստոս (Եսայ. Է. 9-14, Մատթ. Ա. 1, 20-23, Ա. Յովհ. Գ. 8, Յովհ. ԺԲ. 31):

գ. Կնոջ դիրքը փոխուած: 1. Յղութեան ցաւերու խիստ շատցուելը, 2. մայրութիւնը տըխրութեամբ շաղուած, 3. էրկան իշխանութիւնը: Մեղքին մուտքը խանգարում յառաջ կը բերէ եւ իշխողութիւն մը անհրաժեշտ կը դարձնէ: Այս իշխողութիւնը մարդուն կը տրուի (Ա. Տիմ. Բ. 11-14, Եփես. Ե. 22-25, Ա. Կոր. ԺԱ. 7-9):

դ. Երկիր կ'անիծուի մարդուն պատճառաւ: Այլեւս աւելի լաւ է ինկած մարդուն համար անիծեալ եւ անբերի երկրի մը հետ պայքարիլ քան թէ առանց տաժանքի ապրիլ:

ե. Կեանքը անխուսափելիօրէն տխուր կը դառնար:

զ. Եղեմի թեթեւ աշխատանքը կը փոխուի նեղութեան եւ քրտինքով աշխատանքի:

է. Մարմնաւոր մահ, նաեւ հոգեւոր մահ (Ծննդ. Բ. 17, Եփես. Բ. 5):

Քրիստոս Ադամական ուխտի «կնոջ սերունդն է» (Ծննդ. Գ. 15, Յովհ. ԺԲ. 31, Ա. Յովհ. Գ. 8, Գաղ. Դ. 4, Յայտ. Ի. 10): Նա լիցուց նաեւ ասոր պայմանները քրտինքով աշխատանքի (Մարկ. 2. 3) եւ հնազանդութեան:

3. Նոյեան ուխտը.— Ծննդ. Թ. 1-6: Ադամական ուխտը ձախողեցաւ եւ ջրհեղեղին ջուրերը դատապարտեցին ու ընկղմեցին զայն: Նոյեան ուխտին հռչակումը մարդկութիւնը նոր փորձի մը կ'ենթարկէ: Հոս աչքառու կէտն է մարդկային կառավարութեան հաստատումը: Մարդը կը կառավարուի մարդով եւ մարդը կը կառավարէ երկիրը Աստուծոյ համար: Այս կառավարութիւնը երկու տեսակ եղաւ: Նախ հրեաներունը որ գերութիւնով վերջացաւ եւ յետոյ հեթանոսացը որ պիտի վերջանայ արձանին փշրուելովը (Դան.Բ.) եւ ազգերու դատաւարանով (Մատթ. ԻԵ. 31-46):

Այն մագաղթութիւնը թէ Աստուած Սէմի «Տէր Աստուածն» է, կատարուեցաւ նախ դարերու ընթացքին Աստուածային յայտնութեանց ամենուն ալ Սէմի սերունդէն մարդոց միջոցաւ յայտնուելովը եւ մանաւանդ Քրիստոսի մարմնի կողմանէ Սէմի սերունդէն ծնանելովը (Հո. Ա. 3, Կող. Բ. 9):

4. Աբրահամեան կամ խոստումի ուխտը.— Ծննդ. ԺԲ. 1, ԺԵ. 18: Աբրահամ եւ իրմէ սերած ազգը խոստումին ժառանգորդները եղան: Այս ուխտը բոլորովին անպայմանադրական եւ շնորհքի ուխտ մըն է: Կը բաւէր որ Աբրահամի սերունդը մնային իրենց գտնուած երկրին մէջ եւ ամէն օրհնութիւնը պիտի ժառանգէին: Եգիպտոսի մէջ անոնք կորսնցուցին իրենց օրհնութիւնները բայց ո'չ ուխտը: Խոստումի դարաշրջանը (տնօրինութիւնը dispersion) վերջ գտաւ երբ Իսրայէլ յանդգնեցաւ խոստանալ օրէնքին գործադրութիւնը (Ելից ԺԹ. 8): Շնորհքը անոնց համար ազատարար մը (Մովսէսը) պատրաստած էր, շնորհքը անոնց մէջ յանցաւոր եղողներուն համար զոհ մը նախախնամած էր, շնորհքը զանոնք Աստուածային զօրութեամբ (հզօր ձեռքով ու տարածուած բազուկով Սաղ. ԺԼԳ. 12) գերութեանէ ազատեց (Ե.

(ից ժԹ.4) բայց Սինա լեռան առջև անոնք շը-
նորհքը օրհնքի հետ փոխեցին: Խոստումի դա-
րաշրջանը կ'երկնայ Մննդ. ԺԲ.1էն մինչև Ելից
ԺԹ. 8 եւ անիկա միմիայն Իսրայէլական էր:
Այսպէս դարաշրջանը, տնօրէնութիւնը պէտք է
զանազանել ուխտէն: Առաջինը փորձելու կերպ
մըն է, երկրորդը յաւիտենական է, վասնզի ա-
ռանց պայմանի է: Օրհնքը Աբրահամեան ուխտը
չխափանեց (Գաղ. Գ. 13-18) բայց միջանկեալ
դաստիարակչական վերաբերում մըն էր Աստու-
ծոյ կողմէն «մինչեւ զայն այն սերունդը որու խոս-
տացուեր էր» (Գաղ. Գ. 19-29, Դ. 1-7):

Աբրահամեան ուխտը իր կազմուէլուն (Մննդ.
ԺԲ.1-4) եւ հաստատուելուն մէջ (Մննդ. ԺԳ.14-17,
ԺԵ.17, ԺԶ.1:8) եօթը որոշ մասեր ունի: ա. «Բեզ
մեծ ազգ պիտի ընեմ»: Ասիկա կատարուեցաւ 1.
ընական, մարմնաւոր սերունդով մը, «երկրի փո-
շիին պէս» (Մննդ. ԺԳ.16, Յովհ. Ը.37) այսինքն Ե-
րայեցի ազգը: 2. Հոգեւոր սերունդով մը, «հիմա
դէպի երկինք նայէ... քու սերունդդ այսպէս պի-
տի ըլլայ» (Մննդ. ԺԵ.5,6, Յովհ. Ը.39, Հոով. Գ.16,17,
Թ.7,8, Գաղ. Գ.6,7,29) այսինքն բոլոր անոնք որ
Աբրահամի հաւատքէն են, հրեայ կամ հեթանոս:

3. Իսմայէլով եւս կատարուեցաւ (Մննդ. ԺԶ.18-20):
բ. «Բեզ պիտի օրհնեմ»: Ասիկա կատարուեցաւ
1. աշխարհային կերպով (Մննդ. ԺԳ.14,15,17, ԺԵ.
18, ԻԳ.34,35) եւ 2. հոգեւորապէս Մննդ. ԺԵ. 6,
Յովհ. Ը. 56):

գ. «Եւ քու անունդ պիտի մեծցնեմ»: Աբրա-
համի անունը տիեզերական անուններէն մին է:

դ. «Ու դուն օրհնութիւն պիտի ըլլաս»: (Գաղ.
Գ. 13,14):

ե. «Բեզ օրհնողները պիտի օրհնեմ»: Ասոր
կատարումը սերտօրէն կապուած է մանաւանդ
յաջորդող նախադասութեան մէջ —

զ. «Ու քեզ անիծողները պիտի անիծեմ»: Հրե-
այ ազգին ցրուելէն յետոյ՝ ազգերու պատմու-
թեանց մէջ դարերու ընթացքին ասիկա հրաշա-
լիօրէն իրագործուած է. բոլոր այն ազգերը որոնք
հրեայ ժողովուրդը չարաւարած են, անոնց գէշ ե-
ղած է, եւ բոլոր անոնք որ հրեայ ժողովուրդը
պաշտպանած են, անոնց աղէկ եղած է Աստուա-
ծային անտեսանելի եւ հրաշալի ձեռքով: Ապա-
գան դեռ այս սկզբունքը շատ աւելի հրաշալիօ-
րէն պիտի փաստէ (Բ. Օրին. Լ.7, Եսայ. ԺԳ.1,2,
Յովել Գ.1-8, Միք. Ե.7-9, Անդ. Բ.22, Զաք. ԺԳ.1-3,
Մատթ. ԻԵ. 40,45):

է. «Ու երկրի բոլոր ազգերը քեզմով պիտի
օրհնուին»: Այս ամենէն մեծ, Աւետարանական
խոստումն է որ կատարուեցաւ Աբրահամի «ՍԵ-



ԹԱԳԱՒՈՐԻՆ ԹԱԳԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Ով Սիօնի աղջիկներ, ելէք, եւ Սողոմոն թա-
գաւորը տեսէք, այն թագաւորը, որով իր մայրը անոր
փեսայութեան օրը ու սրտին ուրախութեան օրը պը-
սակեց զանիկա: Երգ. Երգոց. Գ. 11

Կրնամ հաւատալ թէ բոլոր աշխարհի մէջ
զսնուած Աստուծոյ զաւակներէն անոնք որ Մա-
յիս ամսուն 12ին Լօնտոնի մէջ կատարուած
Ճօրճ 2. Թագաւորին եւ իր թագուհիին թագադ-
րութեան հանդէս արարողութիւնը բատիոյի մի-
ջոցաւ լսեցին, սրտի մեծ ուրախութեամբ յիշե-
ցին այն մեծ թագադրութեան օրը որուն մէջ
թագաւորներուն թագաւորը, մեր Տէր Յիսուս
Քրիստոս իր թագուհին, այսինքն եկեղեցին փա-
ռաւոր պիտի կայնեցնէ իր աջ կողմը եւ ինչ
թագադրութեան օր մը պիտի ըլլայ ան:

Ասկէ 1900 տարիներ առաջ այս թագաւորը
ծնաւ Պաղեստինի Բէթլեհէմ քաղաքին մէջ: Ա-

րունդ»ով, «Քրիստոս»ով (Գաղ. Գ. 16, Յովհ. Ը.56-
58): Ասիկա Աղամական ուխտով կնոջ սերունդին
վերաբերեալ խոստումը (Մննդ. Գ.13) աւելի պայ-
ծառ լոյսի մը տակ կը ցուցնէ մեզի:

Հոս պէտք է անցողակի կերպով յիշել նաեւ
Աբրահամեան ուխտին մէջ Իսրայէլի եղած երկ-
րի խոստումը — Բանանու երկրին ժառանգու-
թիւնը: Այս մասին երեք զրկումներու եւ երեք
վերադրուումներու մարգարէութիւններ կան (Մն.
ԺԵ.13,14,16, Երեմ. ԻԵ.11,12, Բ. Օրին. ԻԸ.62-65 Լ.1-3):
Ասոնցէ երկու զրկումներ ու վերադրուումներ
(կամ վերադարձներ) արդէն տեղի ունեցած են:
Իսրայէլ հիմա իր երրորդ ցրումին մէջն է որմէ
նա պիտի վերադարձուի եւ վերահաստատուի Տէր
Յիսուսի գալստեամբ իբր Գաւիթ եան ուխտի թա-
գաւոր (Բ. Օրին. Լ.3, Երեմ. ԻԳ.3 8, Եզեկ. ԼԷ.21-25,
Զուկ. Ա.30-33, Գ. Առաք. ԺԶ.14-17):

Աբրահամեան ուխտին մէջ, ինչպէս տեսանք
Քրիստոս առաջին եւ վերջին տեղը կը զբաւէ, ի-
բրը «Աբրահամի Սերունդը», Աբրահամի Որդին
որ մինչեւ մահուան հնազանդ եղաւ (Մնդ. ԻԲ.18,
Գաղ. Գ.16, Փիլ. Բ.8):

բեւեւքէն մոգեր Երուսաղէմ գալով հարցուցին ըսելով թէ ո՞ւր տեղ է ան որ հրեաներուն թագաւոր ծնաւ, վասնզի մենք արեւելքի մէջ անոր աստղը տեսանք, ու եկանք Անոր երկրպագութիւն ընելու»:

Երբ Պիղատոս Իրեն հարցուց թէ «Ուրեմն Դուն թագաւոր մըն ես, պատասխան տուա՛ւ Յիսուս, դուն կ'ըսես, քանզի թագաւոր եմ»: Բայց ինչպէս դարեւ ատաղ սուրբ մարգարէներուն բերնով խօսուած էր թէ նոյն Անձը պէտք էր առաջ Իր մահովը եւ յարութիւնովը յաւիտենական փրկութիւնը պատրաստէր բոլոր անոնց համար որոնք Իրեն պիտի հաւատային, ինչպէս նաեւ բոլոր աշխարհի համար: Նոյնպէս գրուած ալ է թէ «Քրիստոս մեր մեղքերուն համար մեռաւ, զիրքերուն ըսածին համեմատ, եւ թէ թագունեցաւ ու յարութիւն առաւ երրորդ օրը զիրքերուն ըսածին համեմատ»: Երկինք համբարձաւ փառքով: «Հեռու երկիր մը գնաց իրեն թագաւորութիւն անուելու եւ դառնալու» (Ղուկ. ԺԺ. 12) եւ ի՞նչ դառնալ պիտի ըլլայ այն. ահա տկնարկմը Ս. Գիրքէն Անոր դառնալուն վրայ. —

«Եւ տեսայ երկինքը բացուած, եւ ահա ճերմակ ձի մը, որուն վրայ հեծնողը Հաւատարիմ ու ճշմարիտ կ'ըսուի եւ արդարութեամբ դատաստան կը տեսնէ ու կը պատերազմի, եւ անոր աչքերը կրակի բոցի պէս էին ու անոր զլխուն վրայ շատ թագեր կային ու գրուած անուն մը ունէր զոր մէկը չգիտէր, բայց միայն ինք, եւ սրիւնով ներկուած հանգերձ մը ունէր ու Անոր անունը Բան Աստուծոյ կ'ըսուի... եւ Իր պատմունքին վրայ ու Իր ազգիին վրայ գրուած գիր մը ունէր «Թագաւոր Թագաւորաց եւ Տէր տեւրանց» (Յայտ. ԺԺ. 11-13, 16):

Տակաւին այս յօդուածը չլրացուցած եղբորմէ մը նամակ ստացայ որուն մէջ սա խօսքերով արտայայտուած էր, «Ես ալ Անգղիոյ թագաւորին թագադրութեան արարողութիւնը լսեցի. երբ աչքերէս արցունքներս կը վազէին, տիկինս ինծի հարցուց — ի՞նչ կ'ըլլաս, ես ալ ըսի, ուրախութենէս է որ կուլամ. Աստուծոյ զաւակներուն թագադրութեան օրը միտքս եկաւ, քանզի բոլորս ալ որ Յիսուսի շնորհքով Աստուծոյ զաւակներ եղած ենք, ալ օրուան պիտի արժանանանք: Ո՛հ, այն սէրը, «Աստուած սէր է», Անոր սիրոյն վրայով ես մինչեւ ի մահ վկայել կ'ուզեմ»:

«Թագունին Գու. աջ կողմը կը կանգնի ուփրի ոսկիով զարդարուած (Սաղ. ԽԵ. 9): Լօնտոնի մէջ կատարուած թագադրութեան ատեն երբ

կարգը եկաւ թագունին որ անոր զլխուն ալ թագ դնեն, չէի կրնար օգնել, բայց բնականաբար միտքս գնաց այն մեծ օրուան որուն մէջ Քրիստոսի պատուական արիւնովը լուացուած և սրբուած Իր եկեղեցին պիտի կայնեցնէ Իր աջ կողմը, Իր փառքին արժանացած եւ անթառամ պսակով պսակուած:

Երանի անոր որ Տէրոջմէն խոստացուած եւ քիչ յետոյ կատարուելիք այս ճշմարտութիւններով կը բերկրի: Մենք երեւակայութիւններու ետեւէ չենք երթար, հապա Աստուծոյ անշարժ խոստումներուն վրայ կը կայնինք:

Շիտակ է որ շատ անգամ կ'ըսենք, ես ո՞վ եմ որ այս բաները բերանս կ'առնեմ եւ կ'ըսեմ թէ ինծի այսպիսի բաներ պիտի պատահին եւ տըրւին: Բայց խոնարհութեամբ պէտք է ըսենք թէ ՇՆՈՐՀՔՆ էր որ մեզ հրաւիրեց այս անպատմելի փառքին եւ միայն ՇՆՈՐՀՔՆ: «Գործքերէն չէ, որ մէկը չպարծի»: Գառնուկին արիւնով լուացուած, Անոր փրկարար շնորհքը ընդունած բոլոր հաւատացեալները — հատ մը պակաս չըլլալով — կը պատկանին Քրիստոսի եկեղեցիին, որոնք նաեւ կ'ըսուած են Ս. Հոգիով փրկութեան օրուանը համար: (Եփես. Դ. 3):

Երբ Աստուած քեզ եւ զիս աշխարհէն առաւ, եւ Իր Որդւոյն Յիսուսի տուաւ, Իր մտքին մէջն էր այն օրը որուն մէջ Իր Որդւոյն փառքին պիտի արժանանանք: Եւ հիմա Յիսուսի ձեռքերուն մէջ կը պահպանուինք այն մեծ օրուան համար եւ ապահով ենք Անով: Յովհ. ԺԷ. 12 բաղդատէ Եբր. Բ. 13:

«Վասնզի զանոնք որ առաջուընէ կը ճանչնար, առաջուընէ ալ սահմանեց Իր Որդւոյն պատկերին կերպարանակից ըլլալու, որպէսզի Անիկա անդրանիկ ըլլայ շատ եղբայրներու մէջ, եւ զորոնք առաջուընէ սահմանեց, նաեւ կանչեց զանոնք, եւ զորոնք կանչեց, նաեւ արդարացուց զանոնք, եւ զորոնք արդարացուց, նաեւ փառաւորեց զանոնք: Ուրեմն ի՞նչ ըսենք այս բաներուն համար, եթէ Աստուած մեր կողմն է, ո՞վ պիտի ըլլայ մեզի հակառակ. Ան չի Իր Որդւոյն չինայեց, հապա մեր ամենուն համար մատնեց զԱնիկա, ալ ի՞նչպէս անոր ճիշտ ամէն բաները մեզի չպարգաներ»:

Ով հաւատացեալ, միտք առ այս խօսքերը որ ուղղակի Աստուծոյ սրտին մէջէն կ'ըլլեն եւ քեզի համար գրուած են. իրականացուր զանոնք քու անձնական եւ առօրեայ կեանքիդ մէջ, զօրացիր Տէրոջմով եւ ամէն օր սպասէ այն երջանիկ յոյսին, յաջորդ դէպքը որ մեր առջեւ

ՊԱՏՄԱԿԱՆ

ՄԵԾ ԴԵՄՔԵՐ ՈՒ ԴԵՊՔԵՐ
ՀԱՅՈՑ ՀԱՒԱՏՈՑ ԸՆՏԱՆԻՔԷՆ

.....

ԳՐԻԳՈՐ ԼՐԻՍԱԿՈՐԻԶ

ԵՆ Ի ՎԻՐԱՊԷ.—

Հոբփսիմեանց մարմինները օրերով անթաղ մնացին: Բայց ի տես անոնց՝ Վաղարշապատի բնակիչները աշնպէս չըրին, ինչպէս ապագայ երուսաղէմի ժողովուրդը, որոնք Քրիստոսի երկու վկաներուն դիերուն վրայ «ուրախ պիտի ըլլան ու խնդան, մինչեւ անգամ իրարու ընծաներ պիտի զրկեն» (Յայտ. ԺԱ. 1-10): Մեր մայրաքաղաքի հայերուն սիրտը դեռ աշնքան կարծր, անզգա՛յ չէր: Ուստի անոնք ցնցուեցան ի տես կոյսերուն դիակներուն:

Մանաւանդ Տրդատն ու իր պալատականներէն շատեր աշնքան խղճահարուեցան որ կոյսերու նահատակութեան վեցերորդ օրը խելագարեցան, բռնուեցան գայլախտութենէ, որուն ենթարկուողը կը կարծէ թէ գայլի կամ ուրիշ անասունի մը փոխուած է: Ասոնք ալ կ'երեւակայէին թէ խոզերու կերպարանափոխուած են. մոլեգնած կը թափառէին լեռներն ու անտառները

.....

է, Քրիստոսի երկրորդ գալուստն է, սուրբերուն յափշտակութիւնը (Ա. Թեա. Դ. 16, 17):

Միայն երկու խօսք անոնց համար որոնք պիտի կարդան այս յօդուածը քայց դեռ Քրիստոսի փրկարար շնորհքը, մեղաց թողութեան գիտակցութիւնը չեն գիտեր: Ո՛վ հոգի, դուն այսպէս ըլլալով արդէն պատրաստ չես Քրիստոսի երկրորդ գալուստեան, եւ բնականաբար Անոր երկրորդ գալուստեան վարդապետութիւնը չես կրնար սիրել, ուրեմն ինչո՞ւ կ'ուշացնես Տէր Յիսուսը քու անձնական Փրկիչդ ընելը եւ չես ապաւինիր Անոր ձրի շնորհքին եւ քեզի համար թափած սուրբ արեանը: Ծիշդ հիմա խոնարհ եղի՛ր, ընդունէ եւ քուկդ ըրէ Յիսուսը, Ան քու սրտիդ դրանը առնէն է, բաց Անոր քանի որ դեռ շատ ուշ չէ: Երանի պիտի ըլլալ քեզի եթէ այսպէս ընես:

Տէրօջը ծառայութեան մէջ ձեր եղբայրը
Վեր. Պ. Ս. ԱԿԻԻԼԵԱՆ

Ֆիլատելֆիա

եւ կը բաղձային խառնուիլ վարազներու երամակին:

Տրդատի այդ արգահատելի վիճակը դառն կսկիծ կը պատճառէր մանաւանդ գինք պաշտելու աստիճան սիրող քրոջ, Խոսրովիդուխտի: Սա գիշեր ցորեկ վշտակոծ կը մտածէր իր եղբոր դառնաղէտ դժբաղդութեան վրայ: Կրնանք հաւատալ թէ անոր ամբօթեան ձգտող սիրտը խոր ազդեցութիւն կրած էր կոյսերու սուրբ կեանքէն, ուստի կը խորհէր թէ թագաւորին պատահածը անոնց Աստուծմէ եկած արդար պատիժ մըն էր: Թերեւս արդէն սկսած էր լալահառաջ Անոր ներողութիւնն ու օգնութիւնը աղերսել: Հաւանաբար իր խորհուրդները յաճախ կը յածէին խոր վիրապի մեծ բանտարկեալին վրայ:

Ահա՛ վիշտով եւ յուսով խառն հոգեկան այդ վիճակին մէջ, Խոսրովիդուխտ քանիցս երազներ, այո՛, տեսիլներ ալ կ'ունենայ, որոնց միջոցով իրեն կը յայտնուի թէ միայն Գրիգորը կարող է բուժել իր եղբայրը:

Նախ հաւատ չընծայուի՛ր իր խօսքերուն, քանզի ամէն մարդ կը խորհէր թէ Գրիգոր երկարատենէ ի վեր մեռած էր: Բայց արքայաքրոջ հաստատուն պնդումներուն վրայ՝ Արտաշատ կը զրկուի իր հաւատարիմ խնամակալը՝ Օտա Ամատունին որ ողջ կը գտնէ Գրիգորը: Այո՛, նա ապրած էր 13 երկար տարիներ մահուան լարերով շրջապատուած ըլլալով հանդերձ: Եւ իր կեանքը կը պարտէր նախ Իր Փրկչին ամենակարող ու հրաշալի նախախնամութեան եւ ապա Խոսրովիդուխտի, հաւանաբար նաեւ Օտա Ամատունիի, — հեռատես ու հոգածու կարգադրութիւններուն, որոնց համաձայն բանտապահները մասնաւոր դիւրութիւններ տուած էին Գրիգորի. թերեւս երբեմն կը հանէին զայն խոր վիրապէն եւ կը փակէին բանտին աւելի տանելի խուցերէն միոյն մէջ:

Մէկ խօսքով Օտա Ամատունին ողջ գտաւ Գրիգորը: Պարաններով վեր քաշեց վիրապէն: Հագուեցուց եւ առաջնորդեց զէպի Վաղարշապատ: Ծամբան պատահեցաւ սրտայոյզ տեսարան մը. — իրենց դէմն ելան Տրդատն ու խելագար պալատականութիւնը՝ ամէնն ալ արգահատելի վիճակի մէջ: Գրիգոր կարեկցելով ծնրադրեց ու աղօթեց անոնց համար, որոնք սկսան զգաստութեան առաջին նշաններն իսկ ցուցնել. — ներողութիւն եւ աղօթք խնդրեցին Գրիգորէն: Ան ալ հրաւիրեց զիրենք հաւատալ ու հնազանդիլ Քրիստոսի: Ապա մտաւ Վաղար-

ՊԱՏԱՆԵԱՑ

ՄՕՐ ՄԸ ԿՏԱԿԸ



Քրիստոսի միտքը միմիայն զրաւուած է իր եկեղեցիով. իր փրկեալներով: Անոնց ուղղած բարձրագոյն յանձնարարականը՝ անոնց տուած պատուէն է մէկզմէկ սիրել (Յովհ. ԺԳ. 14, 35): Սէրը նշանն է որով պիտի ճանչցուին իր աշակերտները: Առաքեալները շատ ճշգրիտ կերպով կը նկարագրեն թէ ինչի մէջ կը կայանայ այս սիրոյ պարտականութիւնը (Հոով. ԺԲ. 9, 20, Ա. Պետ. Ա. 22, Դ. 8, Ա. Յովհ. Գ. 16: Կարգալ այս հատուածները):

Քրիստոնէական սիրոյ մէջ կայ բացասական կողմ մը եւ դրական կողմ մը:

ա. ինչ որ սէրը չընէր.—

Ա. Կոր. ԺԳ. 5 — Չարութիւն չխորհիր:

Մատթ. Է. 1-5 — Չգատեր, չքննադատեր:

Յակ. Դ. 11, Ե. 9 — Չարախօսութիւն չընէր, չբամբասեր, ուրիշներէն չգանգատիր:

Հոով. ԺԴ. 1, 10 — Տկար եղողները չանարգեր:

Մատթ. Ե. 22 Քրիստոնեան որ իր եղբայրի կը սիրէ: անոր դէմ չբարկանար, զայն ծաղր չընէր: Սէրը զաղտնապահ է, լուի գիտէ:

Թերութիւն մըն է երբ շատեր սորվեցնելու կ'ելեն: (Յակ. Գ):

բ. ինչ որ սէրը կ'ընէ.—

Ա. Պետ. Դ. 10 — Այն քրիստոնեան որ կը սիրէ, իր ստացած պարգեւները ուրիշներուն ծառայութեան կը դնէ. կամաւ ինքզինք ծառայ կ'ընէ:

Գաղ. Ե. 13, 2. 10 — Ծառայ կ'ընէ իր եղբայրներուն եւ ամէն պատեհութիւնները կ'օգտագործէ ամենուն բարի ընելու եւ մանաւանդ իր հաւատքի եղբայրներուն: Ծանրագին զոհողութիւններ ընելը, հոգեւոր հասունութեան նշան մըն է (Հոով. ԺԲ. 13): Սուրբերուն պէտքերը կարելի է հոգայ կրկնակ տեսակէտով, նիւթական եւ հոգեւոր: Հիւրասիրութեան ետեւէ ըլլալը պարտականութիւն եւ առանձնաշնորհ մըն է:

Սէրը քրիստոնեաները կը շրջէ իրարու վրայ հսկելու (Եբր. Ժ. 24, 25), զիրար յորդորելու (Եբր. ԺԲ. 15), իրարու համար աղօթելու (Մատթ. ԺԸ. 19, Յակ. Ե. 16, Եփես. 2. 18), իրարու հնազանդ ըլլալու (Եփես. Ե. 21), Եկեղեցիին մէջ Պապի դիրք առնել ուղեկէն զգուշանալու, ինչպէս բրած էր «Դիոտրեփէս», որ անոնց մէջ առաջին ըլլալ կ'ուզէ, մեզ չընդունիր... որ մեզի դէմ շաղակրատելով չարախօսութիւն կ'ընէ» (Գ. Յովհ. 9, 10): Սէրը պարտք կը դնէ երիտասարդներուն հնազանդ ըլլալու ծերերուն (Ա. Պետ. Ե. 5): Անիկա քրիստոնեաներուն կը սորվեցնէ փոխադարձաբար զիրար յարգել (Հոով. ԺԲ. 10), ուրիշները իրենցմէ բարձր նկատել (Փիլ. Բ. 3), իրարու ըս-

Հուսին եւ Ռաքէլ գաւականերն էին յարգելի՛րայց նկարագրով իրարմէ բոլորովին տարբեր ծնողներու:

Անոնց հայրը ո՛չ կոպիտ էր ոչ ալ գինեմուլ, սակայն կրօնքի հանդէպ շատ անտարբեր էր, մինչդեռ մայրը մաքրասէր եւ գործունեայ կին՝ Տէրոջ հաւատարիմ մէկ աղախինն էր: Իր ամենաջերմ փափաքն էր որ իրեննները քալէին նեղ ճամբուն մէջ որ դէպի կեանք կը տանի, ուստի չէր դադարեր ատոր համար աղօթելէ:

Աղջիկներուն համար իր աղօթքին պատասխանը ստացաւ, որովհետեւ ան քիչ ատենէն ուրախութեամբ տեսաւ որ անոնք աղէկ բաժինն ընտրեցին, բայց ամուսինը կը շարունակէր անմասն մնալ իր այս ներքին ուրախութեան, ինչ որ խորապէս կը տանջէր զինքը, զի կուրծքի հիւսանդութեամբ վարակուած ըլլալով կը զգար թէ երկար ատեն պիտի չապրէր իր ընտանիքին ծոցը:

Իր մահէն ժամանակ մը առաջ, զգալով որ վերջը կը մօտենայ, կանչեց իր աղջիկները եւ անոնցմէ խոստում առաւ որ իրենց հայրը բնաւ չթողուն: Մասնաւորապէս խնդրեց որ Հուսինը, որ մեծն էր, խոստանայ անդադար աղօթել անոր համար, փրկէսգի ան ալ փրկութիւն գտնէ: Հուսին լըջօրէն խօսք տուաւ:

Մենեւէ առաջ մայրը ըսաւ ամուսինին. «Ձաւականերուս բան մը կը կտակեմ. երբ ես մեկնած ըլլամ, անոնք քեզի պիտի բռնեն թէ ինչ է այդ կտակը»:

Որբացած Հուսին հաւատարմաբար կատարեց իր պարտականութիւններն ու խոստումը: Ան հետեւեցաւ երիտասարդ քրիստոնեայ բարեկամուհիի մը օրինակին: Այդ աղջիկը ամէն օր որոշ ժամանակ մը զատկացուցած էր մօր ապաշխա-

պասել (Ա. Կոր. ԺԱ. 33), լալ անոնց հետ որ կուլան եւ վշտացեալները մխիթարել (Հոով. ԺԲ. 15, Ա. Թես. Դ. 17):

Թարգ. Ի. Յ. ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Սէնթ Էթիէն

րութեան համար աղօթելու եւ իր աղօթքին պատասխանն ստացած էր:

Լուսին ալ իր այս ամենօրեայ խնդիրքին համար ժամ մը որոշեց եւ երբեք չմոռցաւ կանոնաւորապէս եւ ջերմեռանդօրէն աղօթել իր հօրը համար, հակառակ իր բազմաթիւ զբաղումներուն:

Երեկոյ մը հայրը սովորականէն կանուխ եկաւ իր գործէն եւ դուռը բաց գտնելով սկսաւ Լուսինը փնտռել, երբ յանկարծ անոր ձայնը ճանչցաւ քովի սենեակէն: Կը պատրաստուէր կանչել զայն, բայց կանգ առաւ, որովհետեւ լսեց որ Լուսին բարձրաձայն կ'աղօթէր, ինքզինք մինակ կարծելով:

«Ով Տէր, կ'ըսէր ան դուն գիտես որ ես իմ մեռնող մօրս խօսք տուած եմ հօրս համար աղօթելէ բնաւ չզրադրիլ եւ զայն երբեք չթողուլ: Դուն որ փրկեցիր մայրս, քոյրս եւ զիս, կրնաս զայն ալ փրկել: Ո՛հ, Տէր իմ, փրկէ իմ սիրելի հայրիկս, եւ ես իմ բոլոր կեանքս Գեղ օրհնելով պիտի անցնեմ»:

Հայրը երբ այս խօսքերը լսեց, առանց նըշմարուելու դուրս սահեցաւ տունէն եւ դաշտ ելաւ, որովհետեւ Հափազանց յուզուած էր: «Ուրեմն ատիկա էր անոնց մօր կտակը, կ'ըսէր ինքնիրեն, ես երկար ատեն է որ կը կասկածէի արդէն»:

Նոյն իրիկունը հայրը ծունկի եկաւ իր զաւակներուն հետ. եւ անոնց աղօթքը լսուեցաւ:

Եթէ պզտիկները կը կարծեն թէ Աստուծոյ համար հոգիներ շահելու գործին մէջ բան մը ընելու անկարող են, թող փոխեն իրենց պաղափարը: Դուն որ այս տողերը կը կարդաս, սիրելի փոքրիկ բարեկամս, օրինակ առ Լուսինէն եւ մի դադարիր աղօթելէ քու ծնողքիդ համար, քու ընկերներուդ համար, քու ուսուցիչներուդ համար, քու ազգ սկաններուդ համար: Աղօթէ անդադար եւ վստահ եղիր որ Աստուծո քու ձայնդ պիտի լսէ ուշ կամ կանուխ:

Յ. Բ.

Ահաւասիկ ես ու այն զաւակները զորոնք Տէրը ինծի տուաւ, նշաններ ու սքանչելիքներ ըլլալու Իսրայէլի մէջ՝ Սիօն լեռը բնակող դօրաց Տէրոջը կողմանէ:

Նսայ. Ը. 18

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ, ՄԸ

Օրհնարեր անցաւ Ֆրանսահայ աւետ. եկեղեցիներու միութեան ժողովը ի Բարիզ, որ տեղի ունեցաւ Յունիս 23-26, ինչպէս արդէն նախապէս ծանուցուած էր:

Այս ժողովը իր գազաթնակէտին հասաւ մեր սիրելի եղբօր Բարիզի հովիւին Պատ. Զաքարիա Բ. Պուտաքեանի ձեռնադրութեամբ:

Զորեքշաբթի 24 Յունիս երեկոյեան ժամը 9ի մօտ Eglise de Luxembourg արդէն լիքն էր ֆրանսացի եւ հայ աւետ. եկեղեցիներու համայնքներէն ընտրանի խումբով մը: Ներկայ էին նաեւ ի մէջ այլոց Բարիզի բարեջան եւ ձեռնադարձ ատաղնորդը Տ. Վոսմաշպուհ եպիսկ. Քիսպարեան երեք արժանապատիւ քահանաներով եւ առաջնորդարանի մարմնով որոնք իրենց յատուկ արժանաւոր տեղերը զբաւած էին ընդարձակ բեմին վրայ: Մայր եկեղեցւոյ կողմէ եղած այս համակրական ցոյցը Ֆրանսացի բարեկամներու վրայ խոր ազդեցութիւն ըրաւ: Ներկայ էին նաեւ ձեռնադրեալին հանդէպ մասնաւոր համակրանք տաժող բարեկամներ ինչպէս էին Տիար Արշակ Զօպանեան, Տօքթ. Թորգոսեան, Տօքթ. Ալլահվերտի որդի, Տօքթ. Տէր Անդրէասեան եւայլն:

Եկեղեցւոյ օրկը սկսաւ հնչել լուրջ եւ միապաղաղ մեղեդիով մը որ կարծես կ'ազդարարէր ներկաներուն օրուան հանդէսին վսեմութիւնը ու նաեւ նշան կուտար թէ ժողովը սկսած էր: Նոյն միջոցին ներս կը մտնէին Ֆրանսացի եւ հայ ձեռնադրող հովիւներ, իրենց մէջտեղն առած բրիտանարդ ձեռնադրեալը, որ իր տեղն ընդունեց բեմին առջեւ զբաւած մասնաւոր թիկնաթոփ մը վրայ:

Օրհնարանական երգէն յետոյ աւուր պատշաճի Ս. Գրական զանազան տեղերէ կարդացուեցան Ֆրանսերէն եւ հայերէն լեզուներով Pasteur Dartigueի եւ Վիր. Ա. Օ. Փափազեանի կողմէ եւ աղօթքներ մատուցուեցան: Pasteur Marle d'Aubigné քանի մը ջերմ խօսքերով իր սէրը յայտնեց անձնապէս եւ Ֆրանսահայ Աւետ. եկեղեցիի կողմէն Հայ ազգին եւ Հայ եկեղեցիին, ի մասնաւորի Հայ Աւետ. եկեղեցիին եւ շնորհաւորեց Բարիզի եկեղեցին իր ձեռնադրելի հովիւին համար, ու մաղթեց որ այս ձեռնադրութիւնը Բարիզի հայ աւետ. եկեղեցիին

համար նոր դարաշրջան մը ըլլայ օրհնութեանց եւ խաղաղ գործունէութեան:

Ձեռնադրութեան քարոզը վերապահուած էր վեր: Ժօզէֆ Կ. Պարսումեանի, ձեռնադրեալին աներ հօրը, որ ճկուն ոճով մը նախ Թրանսսահայ Աւետ. եկեղեցւոյ միութեան կողմէ խնդակցութիւններ յայտնեց իրեն հոգեւոր պաշտօնեային ձեռնադրութեան առթիւ եւ մաղթեց որ այս ժամը թէ հովիւին եւ թէ եկեղեցիին օրհնութեան համար, ծառայէ: Վերապատուելիին բուն քարոզը զանց կ'ընենք հոս, քանի որ ինքնութեամբ պիտի հրատարակուի թերթիս էջերուն մէջ յառաջիկային, սակայն կ'արժէ յիշել հետեւեալ կէտերը: «Թէպէտեւ այս ձեռնադրութեան արարողութիւնը երրորդն է Թրանսսահայ աւետ. եկեղեցիներու մէջ, բայց եւ այնպէս կարգ մը տեսակէտներով առաջինն է: ա. Առաջինն է Բարիգի համար, որ առաջին անգամն ըլլալով հայ հովիւի մը ձեռնադրութիւնը կը վայելէ: Բ. Առաջինն է Բարիգի աւետ. եկեղեցիին համար: Գ. Առաջինն է Բարիգի Հայ Աւետ. եկեղեցիին համար: Դ. Առաջինն է նաեւ մեր բոլոր եկեղեցիներուն համար մասնաւոր պարագայով մը, որ ձեռնադրութեան թիկնածուին հոգեւոր ծնունդը Թրանսսայի հողին վրայ տեղի ունեցած է (մինչդեռ առաջին երեք հովիւները իրենց վերստին ծնունդը ունեցած էին հայրենիքին մէջ):

Այս ժամը Տէրովը շնորհքով Թրանսսահայ աւետ. եկեղեցւոյն եւ Ա. Բ. Օ. ի միսիոնարութեան գործակցութեան մէկ պտուղն է, եւ Թրանսսահայ եկեղեցիին պատմութեան մէջ նոր էջ մը կը բանայ եւ մեր սրտերն ալ ուրախութեամբ եւ փառաբանութեամբ կը լեցնէ:

Սակայն այս առթիւ չենք կրնար մոռնալ մեր մասնաւոր շնորհակալութիւնը յայտնելու Ա. Բ. Օ. ի տնօրէնին եւ միսիոնի բոլոր բարեկամներուն մեր եկեղեցիներուն հանդէպ մատուցած իր հոգեւոր եւ նիւթական օժանդակութեան համար:

Քարոզէն վերջ սկսաւ բուն ձեռնադրութիւնը:

Ա. Բ. Օ. ի տնօրէն վեր. Տօրթ. Պէոսն քանի մը սրտազին խօսքեր ուղղեց բոլոր ներկաներուն, Բարիգի եկեղեցիին եւ ձեռնադրեալին, հրաւիրելով զայն ոտքի կայնիլ եւ լսել իր ուխտը եւ անոր պատասխանել: Ուխտին ֆրանսերէնը ինք կարդաց եւ հայերէնը վեր. Յ. Ն. Ղազարոսեան, որուն զրական պատասխանին վրայ երկուքին ձեռքերը զրուեցան Աստուծոյ ուխտեալ ծառային գլխուն վրայ, մինչ բոլոր միւս հովիւները եեկորող շրջանակ մը կազմած իրենց ձեռքերը կ'երկնցնէին ղէպի ձեռնադրեալը: Ա-

մէն ոք ոտքի կայնած էր բնական բերումով եւ անշշունչ: Վայրկեանը վսեմ եւ վերացնող էր, միայն իրարու ետեւէ լսուեցան ֆրանսերէն եւ հայերէն լեզուով մէյմէկ աղօթք, ձեռնադրող երկու հովիւներուն կողմէն:

Ձեռնադրութիւնը կատարուած էր: Հովիւներ համըրրով բարեգալուստ մաղթեցին կրտսեր գործակից եղբօր եւ ձեռնադրութեան զուգերգէ մը վերջ, որ երգուեցաւ աւետարանիչ Պ. Կալվին Պարսումեանի եւ իր դեռատի կնոջը կողմէն, պատեհութիւնը տրուեցաւ նորընծայ վերապատուելիին, իր վկայութեանը համար ու նաեւ պարգելու իր տեսակէտը Աւետարանի գործին մասին:

Վեր. Պուտաքեան նախ հակիրճ անդրադարձում մը ըրաւ իր մանկական կ'անքին վրայ ըսելով թէ ծնած է Պարսիզակ եւ իր նախնական ուսումը առած է Պօլիս Ռոպէրթ գօլէն: Իր սկզբնական հոգեւոր դաստիարակութիւնը ընդունած է իր մօրը քով, որ յարաժամ աղօթած է իրեն համար (ի՛նչ վարձատրութիւն մըն էր այս ժամը ներա՝ որ եկեղեցիին մէկ անկիւնը նստած կըրկին կ'աղօթէր իր զաւկին համար սրտառուչ հառաչանքներով):

Վեր. Պուտաքեան դեռ 19 տարեկան պատանի մը, պանդխտութեան ցուպը ձեռք կ'առնէր ղէպի Թրանսսա եւ 1923ին կը հասնէր Մարսէյլ — մեղքի ու մոլորումներու քաղաքը:

Հոն սակայն աստուածային նախախնամութեամբ 1924ին սկիզբները նոր կը կազմակերպուէր Հայ Աւետ. եկեղեցին, որուն զիրկը նետուելով որպէս համակիր, միշտ ներկայ էր անոր պաշտամունքներուն, մինչեւ որ Տէրը տարի մը յետոյ երկնային լուսաւոր այցելութեամբ իրեն ողորմութիւն գտնել տուաւ: Այդ օրէն յետոյ իր հոգեւոր ընկերներուն հետ միասին հոգեւորապէս կը զարգանար անցնելով լոյսէ ի լոյս, օգտակար ըլլալով նաեւ ուրիշներուն:

Նորընծան հետեւեալ կերպով կ'արտայայտուէր իր կոչման գիտակցութեանը մասին.

«Քրիստոսի շնորհքը ճաշակելէս յետոյ մեծ փափաք մը կը լեցնէր զիս ուրիշներն ալ հաղորդ բնելու նոյն օրհնեալ փորձառութեան:

Նոր դարձի օրերուս իսկ Մարսէյլի եկեղեցին ինձ տուաւ այդ պատեհութիւնը ու գործելու ասպարէզը: Արդարեւ հոգիներու բեռը կը ճնշէր իմ վրաս: Մարսէյլի նեղ փողոցներուն եւ սրճարաններուն մէջ խոնուած երիտասարդութիւնը օրն ի բուն իր ժամանակն ու կեանքը մաշեցնելով առանց Քրիստոսի, առանց հաւատոյ եւ եկեղեցիի՝ յոյժ ցաւալի տեսարան մը կը ցուցադրէր: Բազ-

մահազար հայրենակիցներու հոգեւոր անտարբերութիւնը եւ անոնց խոր կարիքին տեսիլքն էր որ հետզհետէ մէջս համոզումս գոյացուց ընդզոր-կելու հոգեւոր սպասաւորութեան ասպարէզը: Անշուշտ այս համոզումը մանաւանդ հիմնուած էր Աստուծոյ ինծի ուղղած կոչումին գիտակցութեան վրայ:

Այսօր կը խորհիմ որ Աստուծոյ «Այո» ըսած օրս այնքան լաւ չէի գիտեր կոչումիս տարողութեան եւ կարիքներուն մեծութիւնը: Դարձեալ քանիցս կրցի չափել իմ անբաւականութիւններս այս վսեմ պաշտօնին համար...

Յետոյ նորընծան ներկայացուց ունկնդիր համայնքին իր տեսակէտը Աւետարանի գործին մասին եւ անոր մէջ կիրարկելիք իր մէթոտներուն զմեզ բաժնեկից ըրաւ:

«Կը վկայեմ որ միշտ հիացող մը եղած եմ մեր ազգային բարեմասնութեանց: Հայ նկարագրին շատ կողմերը սիրած եմ, լիովին զննատած եմ անոր աննկուն հոգին, որովնա տառապանքի ճնշման տակ տասն անգամ ջախջախուելէ յետոյ տակաւին գիտցած է կանգնիլ, յուսալ եւ ապրիլ: Երջանիկ եմ, նկատած ըլլալու հայերուս մէջ գտնուած հոգեւոր եւ մտաւոր ընդունակութիւններուն, պատուախնդրութեան, ձեռներեցութեան եւ այլն գովելի յատկանիշներուն համար:

Սակայն գիտեմ որ այս բոլորին հետ մէկտեղ մենք հայերս ալ համայն մարդկային ազգին հետ գերի եղած ենք այն խորհրդաւոր ու կործանարար ուժին, այն չարիքին. որ մեղք կը կոչուի: Գիտեմ որ մեղքը ինչպէս ուրիշներուն, նոյնպէս էաւ մեր ազգին հոգեւոր կործանման պատճառն է: Գիտեմ թէ մեղքի այս տիրապետութեան տակ անհատը, ազգը եւ մարդկութիւնը դատապարտուած են անյոյս փճացումի:

Այս անյոյս վիճակէն ազատուելու համար ներքին փոփոխութեան, մեղքի տիրապետութենէ ազատուիլ եւ սուրբ ու երկնային կեանք ապրիլ պէտք է: Այս կեանքը ինքնին մեր մէջ չը կայ: Այս կեանքը կ'ընդունինք Յիսուս Քրիստոսի միջոցաւ: Աւետարանը այդ բարի լուրն է որ մեզի կը բերէ եւ նպատակ ունի ամէն մարմնի սորվեցնել որ կատարեալ ըլլան Յիսուս Քրիստոսով Աստուծոյ առջեւ:

Այս Աւետարանի ծառայութեան է որ այսօր կը ձեռնադրուիմ, ու վա՛յ ինծի եթէ չքարոզեմ դայն, քանզի անով եւ միայն անով է որ Աստուծոյ թաղաւորութիւնը եւ Քրիստոսի իրաւունքները պիտի տիրեն սրտերու եւ կեանքերու վերայ:

Պիտի քարոզեմ սակայն եկեղեցիով: Աստուծոյ մարդոց հաւատացելոց խումբն է եկեղեցին, որ կանչուած է երկրի վրայ արտայայտել Աստուծոյ կամքը եւ ներկայացնել խաչին շահերը: Գիտեմ թէ կանչուած չեմ միշտակա գործելու՝ այլ ձեր մէջ եւ ձեզի հետ սիրելի Հայ Աւետ. եկեղեցի, ու այսօր ինքզինքս յօժարակամ կը կապեմ Աւետարանի փառսին՝ ուխտելով Աստուծոյ սպասաւորել Հայ Աւետ. եկեղեցիի միջոցաւ:

Ահա տեսիլքս եւ ուխտս»:

Այս յստակ վկայութենէն յետոյ ընդհանրական փառաբանական երգէ մը յետոյ, Վեր. Պուտաքեանի վերջին օրհնութիւնով վերջացաւ այդ այդ օրհնեալ պահը, ձգելով իր օրհնաբեր ազգեցութիւնը սրտերու վրայ առ ի ապագայ պտղաբերութիւն: Տէրը տայ որ այսպէս ըլլալ Բարիքի եւ Պրահասահայ եկեղեցիներու ու նաեւ «Բանբեր»ի ընթերցողներուն համար, զորոնք բաժնեկից կ'ընենք այս քանի մը տողերով:

Տէրոջը գործին մէջ

X X X

ԻՍՐԱՅԷԼ ԱՆԿԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆ.—

Անգլիոյ արքունի քննիչ յանձնախումբը առաջարկ մը կը ներկայացնէ, որով Պաղեստին կը բաժնուի երեք մասի: Դալիլիան, ծովեզրեայ բարեբեր հովիտները, մինչեւ Նաֆայի սահմանները կը տրուի Հրեաներուն, մէջն ըլլալով ներկայիս աշխարհի երեւելի նաւահանգիստներէն մէկը համարուող Հայֆա քաղաքը, ուրկէ անանշուշտ շուտով պիտի անհետանան բնիկները տեղ տալով գաղթական Իսրայելացիին, այս հողամասը մշակուելով կրնայ մէկ միլիոնէ աւելի ժողովուրդ ապրեցնել. միջին մասը Երմուսղէմ, Նազարէթ, Բեթլեհեմ առայժմ կը մնայ Անգլիոյ իշխանութեան տակ, մինչեւ Տէրոջմէ որոշուած օրը հասնի, ուր հրեան շատնալով հաւանական է որ օր մը տիրանալ նաեւ այս մասին: Իսկ մըրցացեալը պիտի տրուի արաբներուն:

Ինչ օրհնեալ վկայութիւն Աստուծոյ պատգամին: Ահա երկիր մը ուր 20 տարի առաջ հրեան աննշան փոքրամասնութիւն մը կը կազմէր: Այսօր շատցած, պտղաբերած կ'աճի գործնական ապացոյց Տէրոջը խօսքին Եզեկ. ԼԶ. 33-36:

Imp. Y. ARMEN & Cie 39 Rue St. - Savournin Marseille

Le Gérant: H. N. GHAZAROSSIAN

ՏԷՐՆ Է ՆԵՐԿԱՅ ՄԵՐ ՄԷՋ

Վառ-առաձայն

Վ. Տերն է մեր մէջ ներկայ իր սուրբ փառքով անշէջ Մօտենանք յուսով մը անվերջ:

Բ. Ան Նոր Գաւառ առ ջին Ուրեմն ալ լըռենք և լուրջ սրտով մօտենար զինք:

Գ. Մեր սրտերն ներշնչուին այս սր ներկայ յուր թնայ Մեր երգերն բարձրա՛նջ:

1 Տերն է ներկայ մեր մէջ
 Իր սուրբ փառքով անշէջ,
 Մօտենանք յուսով մը անվերջ:
 Անոր զահուն առջին
 Ուրեմն ալ լըռենք,
 Եւ լուրջ սրտով մը խոնարհինք:
 Մեր սրտերն ներշնչուին
 Այս սուրբ ներկայութեան
 Մեր երգերն բարձրանան:

2 Այն վեհ զահին առջին
 Քերովբէք ծընրադրեն
 Տիւ եւ գիշեր երկրպագեն,
 «Սուրբ է, սուրբ է մեր Տէր»
 Կ'երգեն սուրբ հրեշտակներ,
 Նոյնպէս ստեղծուածոց խումբեր,
 Տէր, լըսէ, ընդունէ,
 Երբ մենք բազկատարած
 Մեր խնդրանքն ենք բերած,

3 Պատրաստ ենք եւ յօժար
 Զրգել մեր հաճոյքներ
 Եւ դիւրաւ պաշարող մեղքեր:
 Այսօր ընդունէ Տէր,
 Մեր շունչն իբրեւ նուէր
 Ու մարմինն եւ իր անդամներ:
 Դուն միայն յաւիտեան
 Եղիբ մեր ապաստան,
 Զաւակներդ Քեզ փառք տան:

